

72(56)


Ա-43

հշ

ՌՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԴԵՊՈՒ ԱՆՑՅԱԼՆ
ՈՒ ՆԵՐԿԱՆ

„ՎԱՅԱՍՏԱՆ“



Բարսիբու Մեջան
Փողոց Կոնստանդնուպոլսում 1910 թ.
ՀԱՅԿԱՍՏԱՆ
ԵՐԵՎԱՆ


ՌՌԻԲԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

72(56)
Ա-43

**ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԴԵՊՈՒ ԱՆՑՅԱԼՆ
ՈՒ ՆԵՐԿԱՆ**

Մալախոբուրձուններ Թուրքիայից

253



"ՀԱՅԱՍՏԱՆ"
Կրթամամուլի բաժնուհի
ԵՐԵՎԱՆ 1965



Рубен Яковлевич Агабабян

Путешествие в прошлое
и настоящее

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1965

ԱՌԱՋԱԲԱՆ

Ռ. Աղաբաբյանը գիտնական-նարտարապետին հատուկ ուշադրությամբ մոտենալով այժմյան Քուր-
ֆիայի անցյալին ու ներկային, չանալով հաղորդել իր
սպավորությունները, գրել է իր ինքնահատուկ ուղեգր-
րական նոթերը, որոնք հակիրճ լինելով հանդերձ բովան-
դակալից են և պատկերավոր:

Ռ. Աղաբաբյանը նանաչված դեմք է Սովետական
Վրաստանի առաջավոր գիտնականների շարքերում,
որպես գիտության ու տեխնիկայի վաստակավոր գոր-
ծիչ: Նրա բազմազան աշխատությունները, ինչպես նաև
նարտարապետության մասին կերտած սովորածավալ
դոկտորական դիսերտացիան, գիտական հետազոտու-
թյունները բարձր են գնահատվել արվեստի և մշակույթի
անվանի ներկայացուցիչների շրջանում: Կարևոր է նշել
նաև մի ուրիշ հանգամանք: Վրաստանի մայրաքաղա-
քում Ռ. Աղաբաբյանը ակտիվ ու տոկուն աշխատանք
է տարել որպես համաշխարհային արվեստի և առանձ-
նապես սովետական եղբայրական ժողովուրդների մշա-
կույթի բարձր հումանիստական արժեքների շատ
եռանդուն գիտական-պրոպագանդիստ:

Այդ ամենից հետո զարմանալի չէ, որ նրա ջան-
քերով ստեղծված նույնիսկ բուրգիկ դիտողությունները
տրադիցիոն «տուրիստական» ակնարկների նման չեն:

շարագրված: Տարբեր վայրերի, ֆաղաֆների և ուղիների, շենքերի և մարդկանց նկարագրման նվիրված էջերը բացահայտում են քեզ գեղագետ-գրագետի, քեզ գիտնական-նարատարապետի դիմաստվերը: Փոքրիկ ժողովածուի մեջ ամփոփված գրեթե բոլոր նկարագրական էջերըն էլ կերտված են նրբին կերպով և խոհուն արվեստագետին հատուկ տակառով:

Ռ. Աղաբաբյանը ուղևորվել է Թուրքիա «Ֆելիքս Ջերմինսկի» նավով, սովետական ուրիշ գեղագետ-գիտնականների հետ միասին: Թուրքիայի մայրաքաղաքից՝ Ստամբուլից, նա իր ուղեկիցների հետ այնուհետև մեկնել է դեպի ուրիշ վայրեր ու ֆաղաֆներ:

Հիշատակելով առանձին վայրերի հատկանիշները Ռ. Աղաբաբյանը բուռնի տողեր է նվիրում նաև Ստամբուլի բնակիչներին և կանգ է առնում ավելի տիպական «դետալներին» վրա: Ճարտարապետական հուշարձանների վրա ծանրանալով, նա հանախ դիպուկ և իմաստալից դիտողություններ է կատարում և՛ կարևոր ֆրագմենտների, և՛ հատկանշական բեկորների մասին: Անաչա գիտնականի դիրքերից մտանալով վավերագրերին ու դեպքերին Ռ. Աղաբաբյանը մերթ րնդ մերթ նշում է անվանի գեղագետ-պատմաբանների դիպուկ խոսքերն ու ասույթները: Պետք է ասել, որ նման «շեղումները» ոչ միայն շեն հոգնեցնում ընթերցողին, այլև դառնում են նրան օժանդակող շատ անհրաժեշտ խթաններ: Այսպես, օրինակ, հենվելով ակնավոր բյուզանդագետ Շարլ Դիլի մի նախադասության վրա և նկատի առնելով իտալական նարատարապետական գեղակերտ հուշարձանների, կամ Փարիզի և Վատիկանի գրադարանների մանրանկարներով զարդարված ձեռագիրների մասին եղած դիտողությունները, Ռ. Աղաբաբյանը ավելի դյուրամատչելի, պատկերավոր, համոզիչ է դարձնում նաև իր ակնարկը խնամկարչության մասին: Շարլ Դիլի, ակնավոր գեղագետ-գիտնական Լագարեի մոռումնետալ հետազոտություններից ֆաղված հակիրճ «տեղեկանքներ»

ը», իմ կարծիքով, նոթերին հաղորդում են շատ ուրույն կայրիա: Ընթերցողի ուշադրությունը կարող են գրավել նաև Ստամբուլի ու շրջակա վայրերի վաղեմի հայ բնակիչների մասին եղած էջերն ու ցասումնալից տողերը:

Արվեստի հուշարձանները դիտող, մշակույթի արժեքներն ու վավերագրերն ուսումնասիրող էտյուդիստ-գեղագետը նշմարում է իր հայրենի ժողովրդի շահասեր և տաղանդավոր զավակների տխուր դիմաստվերներն ամենուրեք՝ ապարանքների մոտ, և մոզեսյանում, և մայի ու ավերված հայկական օջախներում: Ակնհայտնի անհաճանափ նիշատակելով հայ մշակույթի տաղանդավոր ներկայացուցիչների պատմական մեծ դերը, Ռ. Աղաբաբյանը անսահման զայրույթով է վերհիշում և դատափետում կառուցող, տաղանդավոր, խաղաղասեր հարագատ հայ ժողովրդի նկատմամբ կիրառված վայրագ վարձագիծը: Այդ վարձագիծը չի կարող երբեք մոռացույթյան մատնվել և պետք է վնասակարեն դատապարտվի առաջին հերթին նենց բուրժուական ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների կողմից:

Ռ. Աղաբաբյանի գեղագիտական-պատմական մտորումների հետ կապակցված վերոհիշյալ կտրուկ դիտողությունները և ապա ցասումնալից բողոքի շեշտը տեղի է լինելով, միաժամանակ հիշեցնում են նորից և նորից, որ սուլթանական անարգ ռազմավարների սպասավորների շանքերով կիրառված վայրագ ձեռնարկները արյան և մահվան անապատներ են դարձրել արվեստ և մշակույթ ստեղծող դպրոցներ և կրթական հաստատություններ կառուցող, ժրջան ու տաղանդավոր, աշխատավոր ու խաղաղասեր ժողովրդի շեն կայանները:

Երբ ես ընթերցում էի Ռ. Աղաբաբյանի աշխատության ջերմ զգացումով լեցուն էջերը այսօրվա Թուրքիայի մայրաքաղաքում ապրող հայ բնակիչների, ինչպես նաև երա վաղեմի մշակույթի ներկայացուցիչների՝ հայ արհեստավորներից Աբիկ Ունջյանի կամ ուրիշ տաղան-

ղավոր վարպետների մասին, վերհիշեցի ականավոր սովետական արևելագետ Գորդլևսկու աշխատության մեջ հիշատակված՝ պարսիկ մեծ պոետ Ջելալեդդին Ռումիի ասույթը «հին օրերի կառուցող հայերի» մասին, ականավոր գեղագետ-պատմաբան Սաբրգյանի դիտողությունները, Չոպանյանի խոսքերը, հայ գորգագործների և Քյոթահիայի հայ արհեստավորների մասին հրապարակված նյութերն ու ակնարկները...

Ստամբուլից սովետական գիտնականների հետ Ռ. Աղաբաբյանը ուղևորվում է ղեպի Բուրսա, Անկարա և ուրիշ վայրեր: Բուրսայի մասին կարդում ենք. «Այստեղ են պահպանվել տեղական նարտարապետության վաղ շրջանի հուշարձանները, այստեղ կարելի է հետազոտել Լազախյին հին բնակելի տան տրադիցիոն օրինակներից շատերը»: Մանրանալով ապա Բուրսայի պատմական անցյալի և բուրք արվեստի հուշարձանների վրա Ռ. Աղաբաբյանը նշում է, որ այդ հուշարձանները ըստ-տեղծվել են՝ «տեղական հնագույն տրադիցիաների պարագա հողի վրա, ներմուծելով և վերամշակելով սելջուկյան Փոփր Ասիայի և վաճառում Բյուզանդիոնի, հայկական և մասնավորապես Կովկասի ժողովուրդների գեղարվեստական ժառանգությունը»:

Հնօրյա ուղևորները ժամանակին նշել են, որ արևմտյան օկուպանտների տիրապետության օրերին Փուրփայի մայրաքաղաքի կենտրոնական քաղամասերը՝ Գալաթան, Պերան, Քաֆսիմը և Շիշլին անգլոմերիկյան զինվորներով կամ վրանգելյան փախստական «հյուրերով» լեցուն վայրերը հիրավի շատ անհրապույր էին: Այդ օրերին արևելյան-ասիական Իսկյուտաբեր, Գատրփյոյը, Մոդան ու ծովափնյա քաղամասերն ու Մարմարայի կղզիները բողնում էին ավելի «խաղաղ ու սանդուղծելի» վայրերի տպավորություն:

Ինքը՝ Ռ. Աղաբաբյանը, նշում է և հիշեցնում, որ շատ և շատ են փոխվել քե՛ս՝ Ստամբուլը և քե՛ս՝ Փուրփայի շատ վայրերն ու ֆազանները: Նոթերի առանձին

էջերում ցրված շատ նրբին կերպով գծագրված բուցիկ ակնարկներն ուրվագծում են և՛ «անցյալի», և «ներկայի» իրականությունը: Գեղագետ գրողի ու պատմաբան նարտարապետի ներհուն դիտողությունները կրում են հիմնավորված «կոմենտարների» բնույթ և չեն առաջացնում ո՛չ անբավականություն և ո՛չ էլ տարակուսանքներ, այլ նույնիսկ բնկավում են որպես անվիճելի փաստարկումներ:

Ասորյա ղեպերն ու մարդկանց դիմանկարները, նավամատուցներն ու համփաները, հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված հուշարձանների խոսուն բեկորները, նոր շենքեր և քանգարաններ՝ այդ ամենը նկարված է այնքան ազդու և հյուսիք վրձինով, որ քելադրում է ընթերցողին առանց վարանումների ձայնակցել հեղինակի ակնարկներին և խոհերին:

Այնուամենայնիվ տեղին կլինի նշել, որ հակառակ նորերի վերնագրի, շատ հատվածների մեջ՝ հետո շատ հետո անցյալի պատկերներն ավելի ցայտուն գույներով են ցուցադրված, քան «ներկան», այսօրվա ասորյան և իրականությունը: Նման տպավորությունը բացատրվում է քերես նրանով, որ գեղագետ-պատմաբանի վրա միամսյա շատ կարև համփորդության օրերին առանձնապես անցյալի մշակույթի ֆրագմենտները հիրավի կարող էին ավելի ուժգին տպավորություն բողնել, քան գորշ և տխուր ասորյան, անհրապույր իրականության տաղտուկը, աղոտ և խուլ փողոցների մարդիկ, հասարակական սուր ներհակությունների մոռյլ էությունը բացահայտող մքին ազդանշանները:


Նս դիտավորությամբ նշում են, որ որոշ նպատակով կազմակերպված և կարևատև ուղևորությունը, իհարկե, չէր կարող նորագրողին ցույց տալ անհրաժեշտ չափով և լիովին «անցյալի» և «ներկայի» բոլոր կարևորագույն հատկանիշները:

Ակներևոր են տոնական տրամադրությամբ սոգորված «հանապարհօրդի» վրա, իրավամբ, Բուֆորի ու Մաբ-

մարայի, գեղեցիկ բնության և գեղակերտ հուշարձանների տեսարանները կարող էին ազդել և հենց առաջին օրերից անգամ գիտնական-նօթագրողի ուշադրությունը նետել դեպի անցյալի հուշարձանների աշխարհը... Ահա ինչու, որոշ չափով «միակողմանի» մտաեցումը բերեւանխուսափելիորեն կարող էր լինել և պետք է քստեղծվեր:

Չնայած այդ հանգամանքին, Ռ. Աղաբաբյանի նօթերի քե՛նկարագրական փաստալից հատվածներն ու էջերը, քե՛նակ աշխատությանը կցված հեղինակի կողմից հմտորեն կատարված լուսանկարները մեր կարծիքով պետք է գրավեն ընթերցողների մեծ ուշադրությունը:

ՄՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ



ԲՈՒՄԵՆԻ ՀԵՍԵՐԸ

Լույսը դեռ չէր բացվել, երբ նավասենյակիս դուռը բխեցին: Մեր ջերմանավը՝ «Ֆելիքս Չերժինսկին», հաղթահարելով Սև ծովի դեկտեմբերյան ակեղծությունը, մտնեմուն էր նեղուցը լուսավորող փարոսներին: Հեռվում մշուշի մեջ ջրերի շուրթից բարձրանում էր բլուրների մի շղթա: Դա Թուրքիան էր...

Վաղուց նկատել եմ, որ յուրաքանչյուր ծով կամ օվկիանոս իրեն հատուկ աղմուկն ունի: Սև ծովի խուլ շունդունից հետո Բոսֆորի ջրերը թեթևորեն ծփում էին ու ծուլորեն տեղի տալիս ջերմանավի արդեն հանդարտ ընթացքին:

Վերին տախտակամածի վրա, նավակառուցի մոտ, ուղևորների մի հոծ բազմություն էր հավաքվել, այդ թվում մեր՝ խորհրդային ճարտարապետների խումբը, որը մեկնում էր Թուրքիա՝ մասնագիտացված ճանապարհորդություն կատարելու:

Առաջին ճառագայթների հետ մեր առջև ուրվագծվում էր բնության մի հրաշագեղ պատկեր, նեղուցի ափերն արդեն որոշակի էին դառնում, իսկ սպիտակ ու գունավոր, անշարժ ու շարժական էլեկտրական լույսերը հետպհետե տեղի տալիս արևի լույսին:

Այդ բազմության մեջ էին նաև մեր մի քանի հայրենակիցները

Սփյուռքից, որոնք Հայաստանում շրջագայելուց հետո վերադառնում էին հեռավոր երկրներ... Նրանցից շատերը դեռ 1914 թվականին գաղթել են Թուրքիայից և փրկվել բնաջնջումից:

— Ահա Բումելի Հիսարը, Բումելի Հիսարը,—գոչեց նրանցից մեկը:

Բումելի Հիսարը՝ բարձրաշտարակ ամրոցը, կառուցված 90 օրվա ընթացքում, Բոսֆորի արևմտյան բարձր ափին ելակետ է հանդիսացել Մեհմեդ 2-րդ աշխարհակալի համար: Այդ բերդին հենվելով նա 510 տարի սրանից առաջ, 1453 թվականի մայիսի 29-ին գրոհով գրավեց Կոստանդնուպոլիսը: Բաղաքի ամրություններից մեկի պաշտպանության ժամանակ վերջին իմպերատոր Կոնստանդին Դ-րագասի հետ միասին տապալվեց Մեծ Բյուզանդիոնը, այն Բյուզանդիոնը, որը տասը դար շարունակ նշանակալից դեր էր կատարել միջնադարի անկնկալներով լի պատմություն ընթացքում: Այդ օրվանից Կովկասի ժողովուրդների առջև երկար ժամանակով փակվեց դեպի Եվրոպա տանող ամենակարճ ճանապարհը, նվազեց և մասամբ էլ կանգ առավ նրանց կարգացման պատմական հախուռն ընթացքը:

Նեղուցի արևելյան ափին Բումելի Հիսարին հանդիպակած ծառանում է Անադոլու Հիսարին, որն ապահովում էր թուրք նվաճողներին թիկունքը: Այժմ այդտեղ Ոսկյուղարն է՝ քաղաքի ասիական մասը:

Բոսֆորի եվրոպական ափին օսմանական պետականության նշանակը հանդիսացող Բումելի Հիսարի հետ մեկտեղ այս ամենը վաղուց պատմություն է դարձել:

Ծովածոցի էլի մի պտույտ և ջերմանավի աջ ափին ելրվեց թուրք վերջին տիրակալների սպիտակ մարմարաշեն ապարանքը՝ Դոմա-Բախչան, կառուցված 1853 թվականին հայ ճարտարապետներ՝ Կարապետ և Գարեգին Բալյանների հեղինակությամբ: Շենքի մասշտաբը լավ է որոշված, սիլուետը շաղկապված է բնության հետ, իսկ ձևերն էլլեկտիկ են:

Դժբախտաբար մենք շատ քիչ տեղեկություններ ունենք արևմտահայ արվեստագետների, մասնավորապես ճարտարապետների կյանքի ու գործունեության մասին, որոնք բազմաթիվ շենքեր են կառուցել Եվրոպայի բազմաթիվ քաղաքներում և բնակավայրերում: Այդ խոսանը վաղուց սպասում է իր ուսումնասիրողին...

Նեղուցի ափերը կարծես մոտեցան իրար: Մեր նավը հեռացավ

Ոսկյուղարից ու մտավ «Ոսկեեղջյուր» կոչված հռչակավոր ծովածոցը, ուր գտնվում է նաև միջապգային մարդատար նավահանգիստը: Մաքսատան ձևականությունները կատարվեցին արագորեն և մենք ափ իջանք...

ՊՏՈՒՅՑ ՄԸ ԳՈՒՍՈ ՔՆԳՆԵՐՈՒ ՄԵՁ

... Մի ոտքը մեկնած Եվրոպա,
Մի ոտքը Ասիո միջին՝
Նստել է Ստամբուլը հպարտ...

Ե. Չ ա ր է ն ց

Այժմ գտնվում ենք աշխարհիս այն միակ քաղաքում, որը կառուցված է երկու մայրցամաքների վրա՝ Եվրոպայի ու Ասիայի, Ասիայի ու Եվրոպայի: Որի՞ն տալ առաջնությունը. երկու մայրցամաքներում ստեղծված ու հազարամյակներով կուտակված կուլտուրան համահավասար կերպով իր դրոշմն է դրել այս բազմադարյան ու խայտաբղետ քաղաքի վրա: Սկզբում այստեղ ստեղծվել է հունական մի գաղութ՝ Բյուզանդը: Հենց այս անվամբ է կոչվել հետագայում արևելահռոմեական իմպերիան՝ Բյուզանդիան: Կայսր Կոնստանդինը 330 թվականին իր մայրաքաղաքը Հռոմից տեղափոխեց Բոսֆորի ափը. այսպես հիմնվեց Կոստանդնուպոլիսը՝ միջնադարի ամենահարուստ ու ծաղկուն քաղաքը: Այդ քաղաքը նկարագրելիս պատմիչներն ասում էին, թե աշխարհիս բարեկեցության երկու երրորդը կուտակված է այստեղ, իսկ մի երրորդը՝ աշխարհիս մնացած մասերում... Վերջապես քաղաքը կոչվեց Իստանբուլ: Այժմ Ստամբուլը Թուրքիայի երկրորդ քաղաքն է, թեպետև իր բնակիչների թվով՝ մեկ ու կես միլիոն մարդ, նա երկրում առաջին տեղն է գրավում:

Մեր ավտոկարը ծովափը թողած բարձրանում է բլուրն ի վեր: Աչքիս առջև պատկերվում է Մարտիրոս Սարյանի դեռ 1910 թվականին

մեծ վարպետությամբ կատարած կտավը՝ «Փողոցը Կոստանդնուպոլսում» Արտաքինից կարծես ոչինչ չի փոխվել 53 երկար ու ձիգ տարիների ընթացքում: Ահա փողոցի վրա ուղղված բարձակավոր ապակեպատ պատը շգամբները, առաջին հարկում ծվարած նեղ ու կիսամութ խանութներն ու չայխանաները: Այո, կարծես ոչինչ չի փոխվել այս հակասություններով լի քաղաքում: Ըլի մի պտույտ, և մենք գտնվում ենք Ստամբուլի կենտրոնում՝ Բերայում: Ու, կարծես, ինձ հետ է մեր մեծատաղանդ Հակոբ Պարոնյանը, նրա դիպուկ նկարագիրն է հնչում ականջիս՝ «Բերայի սահմանն է արևելքեն՝ խաղամուրություն, արևմուտքեն՝ պճնասիրություն, հարավեն՝ շոպլություն, և հյուսիսեն՝ խարդախություն:

Այլ ասանկ սահմանակիցներ ունենալեդ ետքը հանդարտ սրտով կլանք անցուր:

*Այս թաղը Պոլտ Բարիզն է, եթե Բարիզն իրեն նվաստություն չհամարիր յուր անունն Բերայի վրա տեսնելը...»:

Այո, Բերան Ստամբուլի Փարիզն է: Այստեղ Տակսիմ կոչվող գլխավոր հրապարակից, որին առընթեր ավարտվում է օպերայի նորածն թատրոնի շենքը, բլուրի ջրաբաժանով վեր է բարձրանում Ջումհուրիեթ ջադեսին, դեպի ծովածոցն է իջնում Թիքլիք ջադեսին՝ քաղաքի կենտրոնական մայրուղիները: Ջումհուրիեթ ջադեսիի վրա է մեր հյուրանոցը՝ «Պանսիոն Աստորիան»՝ մի նորածն յոթհարկանի շենք, որի գլխավոր ճակատը նեղիկ է ու ապակեպատ: Փողոցի կողմից նեղ ճակատ ունեցող շենքերի արտաքին ձևը, ըստ երևույթին, գալիս է տեղական հնագույն բնակելի տների տրադիցիոն ոճից: Այդ ձևի բազմահարկ շենքեր կան թե՛ Ստամբուլում և թե՛ Թուրքիայի մյուս քաղաքներում:

Նորագույն ճարտարապետության հիմնադիրներից մեկը՝ Կորբյուլյեն, իր «Ուրբանիզմ» աշխատության մեջ այդ առթիվ ասել է. «Բերան փշաքաղվել է իր բարձր տներով, սեղմ ու բարեկազմ, վանդակապատ պատուհանները այդ ամբողջ կանգվածին շողկապված, կայունություն են հաղորդել: Ստամբուլում տափակ կտուրների ժանգոտ ծովում, պարպորշ կերպով առանձնանում են մզկիթների սպիտակ քանդակածեվերը...»:

Այո, տպավորիչ է Ստամբուլի սիլուետը մուգ-կապույտ երկնքի ֆոնին, ուր իջնում են դեպի երկինք մխրճված մինարեշար մզկիթները: Ստամբուլը հինգ հարյուր վեց մզկիթ ունի, բայց նրանց մեջ երկու

շենք կա, որոնք օժանդակում են քաղաքի ճարտարապետական հմայքը ստեղծելուն:

Առաջինը Սոֆիայի բազիլիկան և մեծ տաճարն է, որը 532—537 թվականներին կառուցել են ճարտարապետներ Անթիմիոս Տրալեսցեին և Իսիդոր Միլեթցեին Մարմարա ծովափին:

Անցնում եմ Ղալաթիայի կամուրջով և հաղթահարելով լայն ու նեղ փողոցների ցանցը, Սոֆիայի տաճարն եմ մտնում գլխավոր մուտքից, որը «Հայկական մուտք» է կոչվում հնուց, շատ հնուց, այդ մասին հաղորդել է մեզ Աստղիկը:

Գավիթն անցնելուց հետո իմ առջև բացվում է տաճարի ներսի պատկերը՝ ինտերյերը: Ճարտարապետին այդ ինտերյերն անակնկալի չի բերում, այլ նրանում մարմնավորում, ձևակերպում է երևակայությամբ ստեղծած պլաստիկական կերպարը: Ողորկ սյունաշարերը ընդհուպ հենվում են չորս հուժկու գլխավոր որմնասյուների, որոնք իրենց ուսերից էլ վեր բռնած պահում են չորս գլխավոր հաղթակամարներն ու նրանց միավորող ուռուցիկ առագաստները: Ահա այստեղ են բոլորում գմբեթատակի օղակն ու ցածրանիստ թմբուկն իր քառասուն կամաքաջիդով, ահա այստեղ է սավառնում թեթևանիստ ու մի փոքր ձվածից (31×33 մետր) գմբեթը, ստեղծելով ներքին ճարտարածաի անկրկնելի մի ամբողջություն:

Կան գեղարվեստի արտադրություններ, որոնց դիտելիս մարդ ուզում է լսել ու նայել, նայել և ունկնդրել, երկար ու երկար...

Ահա այսպիսի լարվածության մեջ էի ես, երբ մեր սիրալիր ուղեկիցը՝ թուրք հնէաբան և լեզվագետ Ժակ Պեմբեն, որը եվրոպական և ասիական բազմաթիվ լեզուների հետ միասին նաև ազատ խոսում էր հայերեն, դիմեց ինձ. «Պարոն Աղաբաբյան, իհարկե, ձեզ լավ հայտնի է, որ այս փառավոր գմբեթը, որն այժմ ծածկում է մեզ, վերակառուցել է հայ ճարտարապետ Տրդատը, այն Տրդատը, որը հատկապես հրավիրված է եղել Կոստանդնուպոլիս երկրաշարժից փլված գմբեթը նորոգելու համար...»:

— Այո, հայտնի է,— պատասխանում եմ ես զրուցակցիս... «Այո, հայտնի է»,— կրկնում եմ ես մտքումս ու զմայլվում մեր մեծ հայրենակցի մեծ արվեստով: Տրդատ ճարտարապետին համարյա հավար տարի սրանից առաջ (989—992 թ.թ.) Բյուզանդիայի մեծ ու հզոր միապետության ելրակից փոքրիկ Հայաստանից վիճակվել է կատարել

աշխարհահռչակ մեծ գործ, որը միայն պատիվ կարող էր բերել ամեն մի ազգի, ամեն մի ժողովրդի:

Երբ Մեհմեդ 2-րդը գրավեց Կոստանդնուպոլիսը, հաղթական երթով մտավ Սոֆիայի տաճարը և հրամայեց ոչ թե քանդել ու քարակույտ դարձնել քրիստոնեական սրբատեղին, այլ օգտագործել այն, վերափոխելով նրա ներքին տեսքն իբրև մզկիթ:

Բայց միայն սրանում չի կայանում Այա-Սոֆիայի նշանակությունը թուրքական ճարտարապետության պատմության մեջ: Այս շենքն իր արտաքին ու ներքին ձևերով օրինակ հանդիսացավ այն շատ մզկիթների շինարարության համար, որոնք ցրված էին օսմանյան պետության բազմաթիվ բնակավայրերում: Այդ տեսակետից առանձնապես հետաքրքիր է Սուլթան Ահմեդ Ջամին, Ահմեդիեն, կամ ինչպես ընդունված է կոչել՝ «Աղավնագույն» կամ «Կապույտ» մզկիթը: «Կապույտ» անունը նա շահել է կապտավուն, նուրբ վարդարանքի, հախճապակիներով պատած իր ներքինի և մով ապակիների միջոցով լուսավորված ինտերյերի շնորհիվ: Այդ կապույտ գույնը նրա ինտերյերին առանձնահատուկ թեթևություն, եթերայնություն է հաղորդել: Կապույտ մզկիթը կառուցել է թուրք ճարտարապետ Մեհմեդ աղան (1609—14 թ.թ.), Այա-Սոֆիայի դեմահանդիման բյուզանդական նախկին իպոդրոմի բաց տարածության մյուս եզրին: Այս հրապարակը վարդարված է պատմական երկու հրաշալիքով՝ դա Եգիպտոսից բերած կարնակյան օբելիսկն է և դելֆյան ուրբաձև սյունացողունը: Մեհմեդ աղան շարունակել է Սինանի ստեղծագործական ուղին, Ալպոյաճյանն իր «Պատմություն Կեսարիո հայոց» աշխատության մեջ նշում է, որ Սինանը կեսարիացի հայ է եղել: Նա ներշնչված Սոֆիայի հաղթական ճարտարաձևից, դեռևս 1566—74 թվականներին կերտել է Սուլեյման օրենսդրի հայտնի մզկիթը՝ Սուլեյմանիեն: Թուրք ճարտարապետի՝ Մեհմեդ աղայի առաջ դժվարին մի խնդիր էր դրված՝ նոր կառուցով ստվեր գցել Այա-Սոֆիայի կարողաձավ շենքի վրա: Սոֆիայի տաճարից հետո, հազար հարյուր տարվա ընթացքում կուտակված փորձն ու շինարվեստի նոր հնարավորությունը Կապույտ մզկիթի հեղինակին առատ միջոցներ ընձեռեցին իր շենքի ներքին ու արտաքին ձևերը միասնացնելու, շաղկապելու ուղղությամբ: Որպեսզի պարզ պատկերացնել շենքի չափերը, բավական է ասել, որ նրա ներսում ծնկաչոր տեղավորվում է երեսունհինգ հազար հավատացյալ:

Մզկիթի դռան մոտ մի երիտասարդ լուսանկարներ ու գրքեր էր վաճառում, երբ մոտեցանք նրան, նա ուշադիր լսում էր մեզ: Նկատեց, որ շատերը մեզնից հայերեն կամ վրացերեն են խոսում, նա դիմեց մեզ աղավաղված վրացերենով և ասաց, որ ինքը «նախկին գուրջի է», այսինքն՝ իսլամը ընդունած նախկին վրացի, բայց այժմ օսման, այսինքն՝ թուրքացած: «Իմ նենեն վրացերեն լավ գիտի», ասաց:

«... Ովքեր եղել են Կոստանդնուպոլսի սուրբ Սոֆիայի և Սալոնիկի սուրբ Դիմիտրու տաճարներում, մինչև վերջինիս ավերվելը 1917 թվականի հրդեհից, ովքեր տեսել են Բավեննայի սուրբ Վիտալիի եկեղեցու, Դափնի և Ֆոկիդայի սուրբ Լուկայի եկեղեցիների խճանկարներն ու Վենետիկի սուրբ Մարկոսի ու Պալերմոյի Պալատինյան մատուռի շքեղությունը, Միստրայի հուշարձանները, Կոստանդնուպոլի Կախրին-Ջամիի խճանկարչությունը ու Աթոնի վանքերի որմնանկարչությունը, ովքեր դիտել են Փարիզի ազգային և Վատիկանի գրադարանների հիանալի մանրանկարներով վարդարված ձեռագրերը, նրանք գիտեն բյուզանդական արվեստի գեղեցկությունն ու բազմապանությունը»: Այսպես է գրում ֆրանսիացի բյուզանդագետ Շարլ Դիլը՝ «Բյուզանդական պատմության հիմնական պորբլեմները» կոչվող իր հայտնի ուսումնասիրության մեջ:

Շարլ Դիլի խտացված, բովանդակությամբ հարուստ այս մի նախադասությունը վաղուց տպավորվել էր իմ հիշողության մեջ և ես, իհարկե, ձգտում էի տեսնել սուրբ Սալվադորի 11-րդ դարում շինված նախկին քրիստոնեական եկեղեցու՝ այժմ Կախրին-Ջամիի աշխարհահռչակ խճանկարչությունը՝ մոզաիկան, որը ծագել է 1303 թվականին և որը պալեոլոգյան գեղանկարչության ամենավաղ ու ամենանշանակալից հուշարձանն է համարվում:

Խճանկարչությամբ վարդարված են եկեղեցու զավիթն ու կաթողիկեն, դեկորատիվ ալդ մեծ անսամբլը պատկերում է Մարիամի ու Զրիստոսի կյանքն իր բազմաթիվ մանրամասնություններով: Գահի վրա բազմաձև Զրիստոսի առջև ծնկաչոր ներկայացված է բյուզանդական իմպերատոր Ֆեոդոր Մետոխիտը՝ խճանկարչության պատվիրատուն: Դիտողի առջև անցնում է պատրիարքների, մարգարեների, առաքյալների, թագավորների ու սրբերի մի ամբողջ զալերեա, տեղավորված առանձին մեդալիոնների մեջ:

Խճանկարների հորինվածքը վարմացնում է դիտողին ոչ միայն

իր պոլիբրոմիական նուրբ ճաշակով, բնական և ճարտարապետական լանդշաֆտի ու հեռանկարչության լայն օգտագործմամբ, այլև նկարագրության ռեալիստական ոճով, որը շատ հաճախ կարծես թե ժանրային պատկերի է վերածվում: Կախրե-Ջամիի խճանկարչությունը անմիջականորեն հարվում է վաղ վերածնության արվեստին: Իսկուր չէ, որ արվեստի պատմագրերը իտալական պրիմիտիվիստ Ջոտտոին հանձարեղ բյուզանդացի են համարում:

Կախրե-Ջամիի խճանկարչության բազմաթիվ օրինակներ հրատարակել ու մանրամասն ուսումնասիրել է խորհրդային բյուզանդագետ Վ. Ս. Լապարևը իր «Բյուզանդական գեղանկարչության պատմությունը» երկհատորյակում:


Բյուզանդական խճանկարչության այս տրադիցիան, որի ակունքները մենք տեսանք հին հելլենական օրինակների մեջ՝ Էգեյան աշխարհի հուշարձանները դիտելիս, այժմ վերածնված է նոր Թուրքիայի արվեստագետների կողմից բնակելի և հասարակական շենքերում:

Այդ տեսակետից հետաքրքիր է Ստամբուլի հյուսիսային կողմում, 4-րդ կենտրոն կոչված թաղում կառուցված բնակելի տների կոմպլեքսը: Այդ տների հարթ ճակատները հարդարված էին խճանկարների ժամանակակից օրինակներով, որոնց հեղինակն է նկարչուհի Ելեր էյի Բոլուն:

Այա-Սոֆիային կից է սուլթանական պալատների կոմպլեքսը՝ Թոբ-Գափուն, որը կարծես վերից ունկնդրում է Բոսֆորի մուգ կապույտ ջրերի միախառնմանը Մարմարիայի հանդարտ հորձանքներին:

Պալատական այս կոմպլեքսի հիմքը դրվել է դեռևս 15-րդ դարում՝ բյուզանդական մայրաքաղաքի ամենաբանուկ ու ծաղկուն վայրում, հնագույն ամրոցի տեղամասում: Մուստաֆա Բեմալի կարգադրությամբ Թոբ-Գափուն, ինչպես նաև Այա-Սոֆիան թանգարանների են վերածված:

Մենք մտանք գլխավոր մուտքից... Բանի-բանի առաջավոր մարդիկ ալեհեր Կովկասից մտել են այս դռնից և այլևս դուրս չեն եկել այստեղից... Գլխավոր բակի կենտրոնում, որը կառուցապատված է սյունաշար շենքերով, լալ-կակաչի, վարդակակաչի այգի է գցված: Արևելքի այդ վառ ծաղիկներն առաջին անգամ 16-րդ դարում հուլանդական դեսպանները տարան Եվրոպա: Աշխարհաբոցակ այդ ծաղիկների բազ



մաթիվ օրինակներն առաջին անգամ, դեռ 1960 թվականին, տեսա Ամստերդամի օդանավակայանում Ֆրանսիա մեկնելիս:

Մի հսկայական խոյակ կա բակի աջակողմում ուղ հելլենական, թե՛ բյուզանդական: Ըստ երևույթին այդ սահմանամերձ ժամանակաշրջանի ստեղծագործություն է, թերևս Կոստանդինի օրերից մնացած մի բեկոր: Որպեսզի պատկերացվի թե ինչպիսի շենքի մնացորդ է այդ խոյակը, բավական է ասել, որ նրա բարձրությունը երկու մետրից անցնում է: Եթե համաչափական մի պարզ հաշվում կատարվի, կպարզվի նաև սյան բարձրությունը՝ մոտ քսան մետր:

Մեր թվագրության սկզբին կառուցված այդ վիթխարի շենքն, ըստ երևույթին, ներշնչող տեսք է ունեցել և մոնումենտալ համաչափություն: Այստեղ, այս խոյակին կից գտնվող հողերում հնում ապրող բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների ստեղծած բազում հուշարձանների բեկորներ կան թաղված, որոնք իրենց պեղողին են սպասում:

Անսահման հարստություն է կուտակված Թոբ-Գաբուլի թանգարաններում: Այստեղ է այն բոլորը, ինչ հավաքել, ստացել, բերել կամ թալանել են թուրք սուլթանները: Ահա ճենապակու դահլիճները, ուր կարող եք տեսնել չինական հնագույն ճենապակյա շինվածքները 14-րդ դարի, որոնք օրինակ հանդիսացան տեղական, թուրքական ճենապակու արտադրության վարձացման համար: Հետագայում ողջ Եվրոպան չինականից ընդօրինակեց իր առաջին փորձերը և վարձացրեց թեթև արդյունաբերության այդ հանրօգուտ ճյուղը: Այստեղ են հավաքված սուլթանական ոսկյա և արծաթե ամանեղենն ու սեղանի վարդերը և այդ խառնիճաղանջի մեջ ահա մի նուրբ աշխատանք՝ արծաթե սափոր, նրա մեջ ոսկուց քանդակված հասկեր, այո՛, հասկեր, իսկական հասկեր: Հեղինակը չի կորել՝ Աբիկ Ունջյան:

Ահա և սուլթանների անձնական գրադարանի գրքերն ու ձեռագրերը, սեղանին մի սփռոց կա մեկ քառակուսի մետր մեծությամբ, նրա վրա գրված է Ղուրանի ամբողջ տեքստը: Դա դեռ ոչինչ. հինգ հատիկ բրինձ, նրանց վրա էլ փորագրված է Ղուրանը սկզբից մինչև վերջ: Սուլթանը հավանել է աշխատանքը՝ հինգ հարյուր ոսկի նվիրել հեղինակին իր արվեստի համար և հինգ հարյուր ծիպոտի հարված անօգուտ աշխատանքի համար: Կարծես մի նովել լինի «Հալար ու մի գիշերից»:

Այստեղ են գտնվում պարսկական մանրանկարչության բազմաթիվ



և առաջնակարգ նշանակության օրինակներ: Նայում եմ. չէ՞ որ ինձ վաղուց ծանոթ են այս կարգերը՝ սև ու ոսկեգույն, կարմիր ու կապույտ: Այստեղից է ներշնչվել ռուս նկարիչ Ուշինը՝ «Հապար ու մեկ զիշերի» ակադեմիական հրատարակության ութհատորյակը ձևավորելիս:

Հետևյալ դահլիճում ձեռք ապշեցնում են ոչ թե իրերն իրենց արտաքին ձևերով, այլ այն նյութերը, որոնցով շինված են այդ իրերը: Նկարագրելն անհնար է և անօգուտ. ահա մի երկու օրինակ:

Սուլթանական գահը՝ լայն բազկաթոռի նման, երկու մարդ կարող է նստել, ամբողջը բաջադու ոսկուց, կարդարված կմրուխտի հարյուրավոր ակներով, ամեն մեկը ձվի չափ՝ 350 գրամ:

Այստեղ են ցուցադրված նաև Աբդուլ Համիդի շքանշանները՝ ամբողջն աղամանդով: Այդ շքանշանները՝ նա շահել է իմ հայրենակիցների արյունով, հայ կուլտուրայի օջախների ավերման ու հրդեհման գնով: Զվվանքով շրջում են դեմքս:

Սուլթան Համիդն ու նրա պինակիցները սրի քաշեցին հայերին, հարյուր հազարավոր մարդիկ բնաջնջվեցին կամ տուն ու տեղից կտրված գաղթի ճամփան բռնեցին: Բայց մեր աշխատավոր ժողովուրդը մնաց, նա իր կյանքի նոր բույնը հյուսեց նոր հողերի վրա: Նա մնաց նաև Թուրքիայում, նաև Ստամբուլում... Այո, ժողովուրդն անմահ է, ժողովրդին բնաջնջելու ձգտումն անմտություն է: Ես թարմ է պատմության դասը:

Ստամբուլում և նրա շրջակայքում այժմ մոտ 80 հազար հայություն կա, Թուրքիայում՝ մոտ 120 հազար: Գավառներում ապրող հայերից շատերը հետպահեցնել կորցնում են իրենց լեզուն ու սրբային նկարագիրը: Հայկական մշակութային կյանքը պահպանվել է հիմնականում միայն Ստամբուլում, ուր լույս են տեսնում «Ժամանակ» և «Մարմարա» օրաթերթերը, «Արշավ» և «Նոր դար» շաբաթաթերթերը, «Քուլիս» գեղարվեստական հանդեսը, «Պարտեզ» մանկաթերթը և այլ տպագիր ու աշակերտական խմորատիպ պարբերականներ:

Ես չկարողացա հանդիպել «Ժամանակ» օրաթերթի խմբագիրներ Հ. Սվազլանին և Գ. Մուրադյանին: Այդ օրերին նրանք հյուրընկալվում էին Երևանում: «Ժամանակը» Թուրքիայի ամենահին հայատառ թերթն է, որ հիմնադրվել է 1908 թվականին: Նրա էջերում հանդես են եկել Գրիգոր Զոհրապյան ու Երվանդ Օսյանը: Այժմ «Ժամանակը» հնարավորի սահմաններում աշխատում է լուսաբանել ինչպես պոլսահայ, թուր-

քահայ, այնպես էլ Հայաստանի և սփյուռքահայ ցարուցրիվ կենտրոնների մշակութային կյանքը:

Ստամբուլում ու նրա հայաբնակ արվարձաններում գործում են 33 նախակրթական, ոչ լրիվ միջնակարգ վարժարան ու լիցեյ, որոնցում, բացի ընդհանուր պատմությունից ու աշխարհագրությունից, մնացած բոլոր առարկաները դասավանդվում են հայերեն: Այդ դպրոցներին կից գործում են «Սանուց» միությունները, որոնք ընդգրկում են նաև շրջանավարտ երիտասարդությանը:

Ստամբուլում եղածս ժամանակ՝ 1963 թվականի նոր տարվա նախօրյակին, Սարայ-սինեմայի մեջ մեծ հաջողությամբ տեղի ունեցավ հայկական մի համերգ, ուր հանդես եկան երիտասարդ երգիչ ու երգահան Ժիրայր Չարթյանը, ընկերակցությամբ դաշնակահարուհի Գ. Ղապարոսյանի: Նա եվրոպական հեղինակների գործերից բացի կատարեց նաև Արմեն Տիգրանյանի, Արամ Խաչատրյանի և Աշոտ Սաթյանի գործերից:

Ստամբուլի անվանի երգչուհի Ալիս Բիթապձյանը մեծ համբավ է վայելում Փարիզում, Վիեննայում, Ֆրանկֆուրտում ու Նյու-Յորքում: Հայ արվեստագետները ակնառու հաջողություն են ձեռք բերել թուրքական կինոֆիլմերում: Նրանցից են Ն. Գուսպյանը, որ երեսուցից ավելի ֆիլմի է մասնակցել, Արշ. Ալեքյանը, Ն. Խաչերյանը, Էդ. Երեցյանը և ուրիշներ: Ինձ հայտնեցին, որ Ստամբուլի օպերային թատրոնի դերասանների զգալի մասը հայեր են:

Լինել Ստամբուլում ու չտեսնել նրա շուկան՝ Կափալի-չարսըն, դա նույնն է լինել Մեկկայում և չայցելել Մահմեդի գերեզմանը: Եվ մենք այցելեցինք արևելյան այդ տիպիկ շուկան, որը գտնվում է Թուր-Գաբուլի կից հայալիտ մկկիթին մոտ:

Այստեղ են հանդիպել արևելքի ու արևմուտքի վաճառականները հնագույն ժամանակներից ի վեր, այստեղ են բերել իրենց ապրանքները Վենետիկի ու ձենովայի վաճառականները, այստեղ է այժմ էլ բախում Ստամբուլի առևտրական երակը: Հսկայական մի փեթակ, բազմալեզու մարդիկ, հարուստ ու աղքատ, ամեն մեկն ուզում է մի բան ծախել, իսկ առնող, առնողների թիվն անհամեմատ սահմանափակ է, կամ ավելի ծիշտ կլինի ասել, առնողներ համարյա թե չկան:

Առանձնապես մոբիլ են մանկահասակ առևտրականներն ու նորարարները, որոնք մեծ ճարակությամբ թեյ ու սուրճ են մատուցում թե-

չախսանաներում՝ խանութպաններին ու նրանց այցելուներին, և թե դըր-
սում, ուղղակի փողոցում, մայրերի վրա:

Խանութները դասավորված են ըստ շարքերի, իրար դիմաց կապ-
մելով մի հարկանի փողոցներ: Փողոցները ծածկված են ապակով.
ասում են այդպիսի հարյուր փողոց կա շուկայում, իսկ քանի՞ խանութ...

Այս շուկայում կարելի է գնել ամեն ինչ՝ ամենաթանկագին ոսկե-
ղենից սկսած մինչև թարմ ձուկը: Ահա մի ալեհեր ձկնորս: Նա բարձ-
րածայն գովում է իր ապրանքը: Սա լուրահատուկ է արևելյան շուկա-
ների համար, ու կրկնում՝ «Լավ ձուկ է, հենց հիմի եմ բռնել, հավա-
տացեք ձեր մահմեդականին, նա չի խաբի: Եթե չեք հավատում, թող
ձեր տված փողը իրեն հարամ լինի...»:

Եթե նկատի առնեք, որ նա իսկապես ձեր է ու ջերմեռանդ հավա-
տացյալ, ապա ձուկն անպայման պիտի լինի այսօրվա բռնած:

Հետաքրքիր է, որ բավարում կան նաև «հնագիտական խանութ-
ներ», այո, հնագիտական: Այդտեղ կարող եք գտնել խեթական, էգե-
ջան ու բյուզանդական բազմաթիվ մանր ու մեծ իրեր կամ սուվենիր-
պատճեններ:

Թուրքիայում պեղումները կատարվում են մասնավոր ֆիրմաների
միջոցով: Ամեն մարդ, ում պատկանում է հողամասը, նա կարող է
հայտնաբերված իրերը պահել իր մոտ, նվիրել թանգարաններին կամ
ուղղակի վաճառել: Կան առանձին վաճառականներ ու ֆիրմաներ,
որոնք հատկապես պրաղվում են հնագիտական իրերի առուծախով:

Ստամբուլի շուկայում կարելի է սակարկել: Ամեն մի վաճառական
երկու գին է գրում իր ապրանքի վրա, առաջինը՝ ինչ գնով նա առել է,
իսկ երկրորդը՝ ինչ գնով նա ցանկանում է ծախել: Ահա այդ սահման-
ներում էլ կարելի է սակարկել:

Եթե գիտեք հայերեն, մանավանդ պոլսահայ բարբառով խոսել, ապա
կարող եք հաճախել Ստամբուլի շուկան: Բազմաթիվ հայ վաճառա-
կանների և առաջնակարգ արհեստավորների հանդիպեցինք մենք այն-
տեղ, որոնք մեծ հետաքրքրությամբ ու ծարավով էին լսում մեր պատ-
մածը Հայաստանի ու Սովետների երկրում ապրող իրենց հայրենա-
կիցների մասին: Հարցերի տարափ, պատասխան, ու էլի նոր ու նոր
հարցեր... Համարյա ոչինչ չգիտես Ստամբուլի հայերը Հայաստանի վե-
րաբերյալ: Թուրքական իշխանությունները սահմանափակում են ամեն
տեսակ օբյեկտիվ ինֆորմացիա Սովետական Միության մասին և կամ

ուղղակի արգելում: Այդ տեսակետից խորհրդային մարդիկ իրենց կոն-
տակտով Սփյուռքի և մանավանդ Թուրքիայի հայության հետ անհամե-
մատ մեծ դեր ունեն կատարելու:

Այդ մարդկանցից իմ հիշողության մեջ վառ մնացին շատերը, այդ
թվում՝ Արամ Հմիրյեն (Հմիրյան), Վահե Թեքերը (Բուլաջյան) և
Միհրան Ղազարյանը: Վերջինիս հետ ծանոթացա Կափալի-չարսիում
միանգամայն պատահաբար. շուկան պտտելիս ես աղջկաս հետ խոսում
էի հայերեն, նա ուշադրություն դարձրեց մեզ վրա, մոտեցավ, սիրա-
լիր կերպով առաջարկեց օգնել մեզ շրջելու շուկան իբրև «գիրդ»: Իս-
կապես, եթե լավ ծանոթ չես Ստամբուլի շուկային, հեշտությամբ կա-
րող ես «կորչել» նրա լաբիրինթոսում:

Միհրանը կապված է հայ մշակույթի հետ: Նա կարդում է «Ժա-
մանակ» թերթը, հաճախում հայկական երեկույթները: Բայց այդ բո-
լորը շատ քիչ է, ասում է նա, երիտասարդությունը հետզհետե մոռա-
նում է մեր լեզուն, մեր աղաթները:

— Դուք առաջին ծիծեռնակներից եք Կովկասից, մեր հայրենի
վայրերից վաղուց մենք կենդանի խոսք չկայինք լսած,—ընդգծում է
նա մեզ դիմելով,—հաճախ եկեք, նամակ գրեք, բարեկամ լինենք, մենք
անչափ ուրախ կմնանք:

Մենք փոխանակեցինք մեր հասցեները, դժբախտաբար ժամանայ
չեղավ այցելելու նրա տունը՝ տեսնելու նրա փոքրիկ աղջկան, որի
անունով նա երգվում էր և որին իմ դուստրը շոկոլադ նվիրեց հոր մի-
ջոցով, հեռավոր հայրենիքի քաղցրավենիք:

Արամ Հմիրյեի և Վահե Թեքերի հետ իմ հանդիպումներն ավելի
անակնկալ էին:

Երբ ցուցակագրվում էինք Ստամբուլի «Աստորիա» պանսիոն-
օթելում, ես նկատեցի, որ սեղանի մոտ նստած ակնոցավոր պատկա-
ռելի մի մարդ առանձին ուշադրությամբ է կարդում անձնագիրս: Կար-
դում է ու նայում ինձ, նորից կարդում, և նորից նայում: Ապա Պոլ-
տ փափուկ բարբառով դիմում է ինձ.

— Ուրախ եմ, պարոն Աղաբաբյան, ձեզ տեսնելու առիթով: Բա-
րի էկաք... Արամ Հմերպե... դուք օթելիս մեջ պիտի ապրիք:

Ապա երկար հարցուփորձ...

— Ես ալ ճարտարապետ եմ, Վիեննա սովրեցի, բայց հետո այս
օթելը կառուցի, կպահիմ... Կապրինք...

Ստամբուլից դուրս գալուս օրը նա մի թղթի փաթեթ տվեց ինձ: Երբ ջերմանալովում բացեցի՝ Թուրքիայի ճարտարապետական հուշարձանների մեծագիր գունատիպ նկարներ էին, որոնց օրինակները ես հավանել էի՝ օթելի ֆոյեում ցուցադրվածները դիտելիս: Այդ մնաց ինձ հիշատակ հայ ճարտարապետ Արամ Էմիրլեից:

Մի երեկո, նշանակված ժամին, երբ ստանք ճաշարան ընթրելու, որը նույն Ջումհուրիեթ ջադեսիի վրա էր գտնվում, ըստ արևելյան սովորության, նկուղի մեջ, մի հիսունին մոտ միջահասակ մարդ մոտեցավ ինձ՝ սև, կրակով լի աչքերով: Դա Վահե Թեքերն էր: Նա նոր էր վերադարձել Ստամբուլ և իմացել Կովկասից ժամանած ճարտարապետների մասին: Իսկույն կարգադրեց գինի բերել, բաժակ առաջարկեց, ողջունեց մեր գալուստը, ջերմ խոսքեր ասաց թե հայերի և թե իմ վրաց ընկերների վերաբերյալ: Մեզ վրա շատ ազդեցին նրա խոսքերը սըրտաբուխ ու թախծոտ, բայց առնական ու լավատես:

Այո՛, լավատես է մեր ժողովուրդը, դժվարություններ հաղթահարող և լավ ապագայի սպասող, լավ ապագան ստեղծելու համար՝ տըքնող, ուր էլ որ նա ապրի:

ԹՈՒՐԿԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ Մ

Ստամբուլից՝ Թուրքիայի երկրորդ մայրաքաղաքից, նրա առաջին մայրաքաղաքը՝ Բուրսա տանող ճանապարհն անցնում է Բարթալ-Յալովայով, որոնք գտնվում են Մարմարա ծովի հանդիպակաց ափերին՝ առաջինը հյուսիսային, երկրորդը՝ հարավային: Այս երկու ավանների մեջ երթևեկում է ծովային երկհարկանի լաստանավը՝ տեղափոխելով մարդատար ու ապրանքատար մեքենաներ ու բազմաթիվ ավտոբուսներ: Այդ ձևի լաստանավերի և ծովային տրամվայների երթևեկությունը շատ է տարածված Բոսֆորի և Մարմարայի վանազան մասերում:

Բարթալը Ասիական Ստամբուլի Ուսկյուդարի արվարձաններից մեկն է, որի մասին Հակոբ Պարոնյանն իր «Պտույտի» մեջ գրում էր՝

«Թաղիս մեջ իբր հարյուր քսան տուն կա հայու: Օդափոխության համար այլ և այլ թաղերե փոս կուզան ամառներն և տենդ առնելով ետ կդառնան... Շատերն ալ գինի առնելու համար կուզան և առանց գինովնալու չեն վերադառնար...»:

Հակոբ Պարոնյանի այս նկարագիրը վերաբերում է նաև այժմյան Բարթալին, որ բավականին անբարեկարգ մի արվարձան է, բազմաթիվ պանդոկներով, չախսաններով ու գիշերօթիկներով լի:

Յալովայից հետո ճանապարհը շարունակվեց Իզնիկ կոչված մի լայնատարած լճափով, ապա հետզհետե մոտեցավ Կենտրոնական Անատոլիայի բարձրավանդակին, որի դեպի Մարմարա ծովն իջնող լանջերից մեկի վրա է տեղավորված օսմանյան կայսրության առաջին մայրաքաղաքը՝ Բուրսան—պատմական Պրուսան:

Բուրսան առանձնահատուկ տեղ է գրավում Թուրքիայի քաղաքների շարքում ոչ միայն իր տեղադրությամբ ու կառուցապատումով, այլև նրան հատուկ, դժվար նկարագրելի, զուտ արևելյան, ավելի ճիշտ, զուտ թուրքական կոլորիտով: Այստեղ են պահպանվել տեղական ճարտարապետության վաղ շրջանի հուշարձանները, այստեղ կարելի է հետազոտել քաղաքային հին բնակելի տան տրագիցիոն օրինակներից շատերը, որոնց կողքին արդեն իրենց տեղն են գրավել ժամանակակից մոդեռն կոտեջներն ու վիլաները:

Եթե Ստամբուլում ամենացայտուն կերպով արտահայտված կոնտրաստների այդ համաշխարհային կենտրոնում, Արևմուտքի ու Արևելքի տրադիցիոն ճաշակների բախման, փոխադարձ ներազդեցության ու ստեղծագործական նորամուծության հետևանքով ստեղծվում է մի յուրահատուկ, ժամանակակից ճարտարապետություն, ապա այդ դժվար է ասել, օրինակ, Բուրսայի նոր շինարարության վերաբերյալ: Այստեղ նորակառույց բնակելի շենքերի զգալի մասը շինված է նոր հատակագծով, բնական պայմանների վարպետորեն օգտագործմամբ, բայց ճարտարապետական լուծման տեսակետից հիմնականում կրկնություն կամ փոխառություն է օտարերկրյա օրինակներից: Այսպիսի տպավորություն թողեց նաև «Չելիկ Պալատը», Պուրսայի նորագույն հյուրանոցներից մեկը, ուր մենք կանգ առանք: Նա համարյա քաղաքի ծայրին է կառուցված դեպի Իզմիր տանող ճանապարհին առընթեր:

Բուրսան հարուստ է բարձր ջերմության հանքային բուժիչ երկա-

թաջրով՝ «Չելրիկ-սուլու»: «Չելրիկ-Պալասի» համարների լողարաններն այդ տաք երկաթաջրով են մատակարարվում:

Զաղաքի միջնաբերդում պահպանվել է կուլտուրական մի քանի շերտ: Մեր թվագրությունից 800 տարի առաջ փռուցիացիներն են եղել այնտեղ, մեր նախնիների՝ արմենների ազգակից ցեղերը: Փռուցիացիները Հին Արևելքի այն ցեղերից են, որոնք իրենց պատմական կյանքն ավարտելուն պես բոլորովին հեռացել են պատմաբեմից: Հատուկտոր տեղեկությունների հետ միասին մեզ են հասել նաև փռուցիական գրությունները, որոնք առաջին անգամ ես տեսա Անկարայի հնագիտական թանգարանում: Նրանց տողերն ընթերցվում են անընդհատորեն, առաջին տողը աջից ծախս, երկրորդը՝ ձախից աջ և այսպես շարունակ: Ըստ երևույթին, այս կարգի ընթերցումն ավելի հեշտ էր իդեոգրամային գրության ժամանակ: Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքը, այդ թվում Բուրսան, առանձնահատուկ տեղ է գրավում փռուցիական անցյալի վերականգնման գործում:

Իսմիրի ճանապարհին է հին Մագնեսիան, այժմ Մանիսան, ուր գտնվում է բերրիության մայր՝ Զիբելայի ժայռակոփ անդրին: Ի միջի այլոց, սա այն Մագնեսիան է, ուր, ըստ Ստրաբոնի վկայության, Մելեկյան իշխանության պարտության հետևանքով և նրա՝ փլատակների վրա ծնունդ առավ Արտաշես-Ջարեհյան հայկական պետականությունը 189 թ. մեր թվ. առաջ:

Փռուցիական ժայռակոփ հուշարձանների ճարտարապետական ձևերը քարի մեջ կրկնում են փայտի կառուցվածքի պատկերը, որը մի ավելորդ անգամ ընդգծում է առաջինների հնագույն ծագումը: Փռուցիացիները վարպետորեն տիրապետում էին քարի մշակման տեխնիկային դեռևս շատ հին ժամանակներում՝ մեր թվագրությունից մոտ ինը դար առաջ:

Ժայռի ու քարի մշակման այդ կուլտուրան հազարամյակների ընթացքում հետպիտես հղկվելով ու կատարելագործվելով, սերնդից սերունդ է անցել, ժողովրդից ժողովուրդ ու հասել մեր օրերը: Զարը, չնայած ժամանակակից բարձրորակ շինանյութերին, նշանակալից տեղ է գրավում կառույցներում:

Մեծ է եղել Փոքր Ասիայի ժողովուրդների ավանդը հելլենական կուլտուրայի և արվեստի վարճացման գործում, առանձնապես նշանակալից են Էոլիական և հունա-հռոմեական՝ իոնական ճարտարաձևերը,

որոնք այստեղ են սաղմնավորվել ու հետո տարածվել ամբողջ աշխարհում:

Բուրսայի երկաթաջրերի վրա են եղել կառուցված հռոմեական բաղանիքները: Այդ ժամանակ պատմական Պրուսան՝ Մարմարայի Պիտիա կոչվող նավահանգստով կապված էր Հռոմի հետ: Մայրաքաղաքից այստեղ էին գալիս բուժվելու հանքային ջրերով:

1080 թվականին թուրք-սելջուկները Բուրսան անջատում են Բյուզանդիոնից: Վեց տարի անց տեղի է ունենում խաչակիրների ներխուժումը, որոնք Բուրսայով դեպի Փոքր Ասիայի խորքերն են իջնում՝ մինչև Միջերկրականի արևելյան ափերը:

14-րդ դարից սկսած՝ մինչև Կոստանդնուպոլսի գրավումը, այստեղ էր գտնվում օսմանյան պետության գահը:

Բարդ պատմական անցյալ ունի այժմյան քաղաքը, ուր առանձնապես մեզ հետաքրքրեցին վաղ թուրքական արվեստի ու ճարտարապետության հուշարձանները, որոնք ծագել էին տեղական հնագույն տրադիցիաների պարարտ հողի վրա, ներծծելով և վերամշակելով սելջուկյան Փոքր Ասիայի և վեսմաշուք Բյուզանդիոնի ու մասնավորապես Կովկասի ժողովուրդների գեղարվեստական ժառանգությունը:

Թուրքական ճարտարապետության վարճացման վաղ շրջանը (14-րդ դարից մինչև 15-րդ դարը), հիմնականում կապված է առաջին մայրաքաղաք Բուրսայի հետ: Այդտեղ կառուցվեցին ժամանակաշրջանի ամենանշանակալից հուշարձանները՝ Ուլու-ջամին (14-րդ դար) և այսպես կոչված Կանաչ մզկիթը՝ սուլթան Մեհմեդի դամբարանը (1423 թ.): Ուլու-ջամին դա մի մեծ դահլիճ է, որի թաղածածկը հենվում է սյունաշարերին, նա Կանաչ մզկիթից տարբերվում է իր ներքին լուծման պարպությամբ: Կանաչ մզկիթը գմբեթածածկ երկու դահլիճից է բաղկացած, առաջին դահլիճին, որի կենտրոնում է գտնվում ոտնավայի մարմարե ավազանը, աջ ու ձախից կցվում են գմբեթածածկ ևս երկու տարածություն:

Ինչպես հայտնի է, ոտնավան իսլամական կուլտի ամենակայուն տրադիցիաներից է: Բոլոր մզկիթներին կից, կամ զավթում, առանձին ջրամբար-պավիլիոններ են կառուցված, որոնց շուրջը դրված են նըպտարաններ, մզկիթ մտնելուց առաջ կոշիկները հանելու, ոտքերը լվանալու և հատուկ փայտե բոջերով աղոթատեղ մտնելու համար: Բոլոր գործող մզկիթների հատակներին խալիչաներ կամ կապերտներ են

փռված, ծնկաչոք աղոթելու նպատակով: Փայտե բոլորի համար հատուկ քարե արկղներ են նախատեսված մկկիթների գլխավոր դռների մոտ:

Կանաչ մկկիթի ներսն իսկապես կանաչ է, կանաչ հախճաասալիկներով երեսապատված ինտերերի շնորհիվ: Լավ է լուծված նաև քառակուսի գմբեթատակից ութանկյունյա թմբուկի միջոցով դեպի զբմբեթն անցնելու ձևը բազմանկյունի ներսի ֆրիլի միջոցով, որն, անշուշտ, սելջուկյան արվեստից է բխում:

Շենքը լուսավորված է բազմագույն վիտրամներով ալեբաստից շինված: Այս կարգի վիտրամները սելջուկներին հայտնի էին 11-րդ դարից, համարյա մի դար առաջ, քան ստեղծվեցին գոթական հռչակված վիտրամները՝ Արևմտյան Եվրոպայում:

Ես վերհիշեցի սեն Շապելի հիանալի վիտրամները, որոնք իմ մեջ տպավորվել են 1960 թվականին Փարիզ այցելության օրերից: Այդ վիտրամներն ունեն իրենց առանձին հմայքը ոչ միայն կատարման տեխնիկայի տեսակետից՝ կապարյա շրջանակների մեջ առնված, այլև իրենց մասշտաբով, որով և տարբերվում են արևելյան հնագույն օրինակներից:

Հին Բուրսայի կողքին աճում է նորը, գործարանային Բուրսան: Այստեղ ստեղծվել է տեքստիլ արտադրություն: Գործարանը նորաձև է, հողամասը բարեկարգված, գործարանին կից կա այգի, բանվորների համար բնակելի տներ: Բայց էականն այն է, որ բանվորների աշխատավարձը ցածր է և բոլորովին չի համապատասխանում ապրուստի մինիմումին:

**ԼՈՒՅՍԸ ՏԵՍՆՈՒՄ ԵՆԿ ՅԵՐԵԿՈՎ,
ՋՈՒՐՆ ԱՆՉՐԵՎԻ ԺԱՄԱՆԱԿ**

Բուրսայից դեպի Իզմիր ճանապարհը բազմապատկեր է, նա հաղթահարում է Փոքր Ասիայի մեծ ջրբաժանի լեռնաշղթան, դեպի Մարմարա ու Սև ծովերը հոսող գետերը մնում են թիկունքում: Մենք իջնում ենք բազմակղզի Էգեյան ծովի ավազանը:

Ամեն մի ծով ու օվկիանոս իր գույնն ունի: Սև ծովի մուգ հորձանքներից հետո Բոսֆորի ու Մարմարայի ջրերը, չնայած ձմեռվա արևաքիչ օրերին, մուգ կապուտակ էին ու վճիտ, իսկ Էգեյան ծովը ուլտրամարինի գույն ուներ՝ իսկական լեղակի գույն: Որքան ծով ու գետ, այնքան գույն ու ներկ:

Հլուսիսից, հարավից ու արևմուտքից ողողված ծովերով Անատոլիական բարձրավանդակը բարեխառն կլիմա ունի: Այստեղ տարածված են ձիթենու, խաղողի ու թզենու լայնատարած պլանտացիաները: Այս երեք կուլտուրան մշակվել է այստեղ շատ հնուց: Դեռևս հիթիթական խեթական պողաբերության աստծո ձեռքին, Իվրիլի ժայռակոփ քանդակում, խաղողի ողկույզ կա իբրև խորհրդանիշ:

Թուրքիան գյուղատնտեսական երկիր է: Նրա բնակչության երկու երրորդը հողագործությամբ ու անասնապահությամբ է կբաղված: Բայց երբ նայում ես նրա գյուղերին, թվում է, թե նրանք կանգ են առել իրենց վարգաքման հետֆեոդալական աստիճանի վրա ու կոնսերվացիայի ենթարկվել: Թուրքիայի ամբողջական պատկերը դիտելիս աղքատ երկրի տպավորություն ես ստանում: Զաղաքի արվարձաններն ու բանվորական ավանները, գյուղերն ու գավառաքաղաքները անբարեկարգ են, կրկված էլեկտրական լույսից, խմելու մաքուր ջրից: Բավական է ասել, որ Անատոլիայի բոլոր քաղաքներում ու բնակավայրերում, ուր մենք եղանք, ամենուրեք խմելու հասարակ ջուրը վաճառվում է հատուկ շշերով, որն, իհարկե, մատչելի չէ ժողովրդի լայն շերտի համար: Ըստ երևույթին, այս հանգամանքն էլ ստիպել է թուրքին՝ օգտվելու եռացրած ջրից: Թեյն ամենուրեք ամենաընդունված ու տարածված ըմպելիքն է այստեղ: Եվ ինչպես իրենք՝ թուրքերն են ասում. «Լույսը տեսնում ենք ցերեկով, ջուրն անձրևի ժամանակ...»:

Վիճակագրական տեղեկությունների համաձայն, 750 հազար գյուղացիական ընտանիք հողավորկ է բառիս ամենաճիշտ իմաստով՝ Ստամբուլում եղած ժամանակ մեկ հայտնեցին, որ միայն 1962 թվականին տեղական բորսային են դիմել 45 հազար գործազուրկ, որոնց մեծ մասը մինչև օրս էլ աշխատանքի չի տեղավորված:

Առողջապահության մինիստրի զեկուցագրերից մեկում այսպիսի թվեր ենք գտնում, երկրում հինգհազար հինգհարյուր մարդու ընկնում

է մի բժիշկ, երկրի 120 շրջաններում առհասարակ բժիշկ չկա, լուրաքանչյուր տասնապար մարդու ընկնում է հիվանդանոցային 17 մահճակալ: Բսանութ միլիոն բնակչություն ունեցող Թուրքիայում տասներկու միլիոն անգրագետ կա, հիմնականում գյուղացիներ: Տասնվեց հազար գյուղ դպրոց չունի: Երկրում քառասուն հազար գյուղ կա և բոլոր գյուղերում անհրաժեշտ բանակությամբ մոլլա, բայց ընդամենը 27 հազար ուսուցիչ... 25—30 գյուղ գյուղատնտեսության միայն մի մասնագետ ունի:

Հիշալ թվերը պարզ ցույց են տալիս, թե սոցիալական ինչ պայմաններում է ապրում թուրք ժողովրդի հիմնական մասը գյուղում ու քաղաքում:

Ստամբուլում եղածս ժամանակ, հունվարի 3-ի «Ժամանակ» լրագրի առաջին էջում մի կնոջ լուսանկար տեսա: Նա կանգնած էր դատարանի ճաղաշարքի հետևում, մակազրված «Վեֆա իստին անգլերենի ուսուցչուհի Լամիրա Իրեն, որ անպարտ արձակուեցավ իբրև համայնավար քարոզչություն ընող դատուել է յետոյ»: Պարզվեց, որ Լամիրա Իրենը ձերբակալվել է միայն այն պատճառով, որ նա աշակերտներին պատմել է Յուրի Գազարինի թռիչքի մասին դեպի կոսմոս: Ռազմական դատարանը դատապարտել է ուսուցչուհուն վեց տարվա բանտարկության: Հասարակության բուռն վայրույթի և բողոքների հետևանքով գործը վերանայվում է և Լամիրա Իրենն ազատազրկվում է մի տարով իբր «պարոն պրեպիդենտին վիրավորելու համար...»:

Չկարծեք թե հեշտ է թուրք լրագրողների դրությունը: Վերջերս «Ջումհուրիեթ» թերթը մի հոդված էր տպագրել «Սոցիալիզմը—դա Թուրքիայի փրկության միակ ճանապարհն է» վերտառությամբ: Թերթի խմբագիրն ու երկու հոդվածագրերն իսկույն ևեթ բանտարկվեցին «կոմունիստական պրոպագանդայի» պատրվակով: Այս փաստերը բավական են, որպեսզի պարզվի թե քաղաքական ու տնտեսական ինչպիսի ծանր վիճակ է ստեղծված երկրի ներսում:

Մեր թիկունքում մնացին Բալիկեսիրն ու Մանիսան: Ուշ երեկո էր, երբ հորիզոնի եզրին սարահարթի վրա երևացին Իզմիրի լույսերը...

Պ. Հ. Ս. Ե. Կ. Գ. Ե. Յ. Կ. Ս. Ե. Բ. Ը. Ը.

Փոքր Ասիան ամենահնագույն ժամանակներից կուլտուրական գանձերի մի խտացված մեծ շտեմարան է, Էգեյան աշխարհը, ժամանակակից քաղաքականության օրրանը:

Ավանդության համաձայն, Էգեյան աշխարհի ծնունդն է Հոմերոսը, Էպիքական անմահ պոեմների՝ «Իլիականի» և «Ոդիսականի» կերտողը, պոեմներ, որոնք նոր ժամանակներում ևս պահպանել են «...որոշ իմաստով... չափի ու անհասանելի նմուշի նշանակությունը»:

Կարլ Մարքսին պատկանող հունական կուլտուրայի այս սեղմ ու հագեցված բնութագիրը մեխված է իմ հիշողության մեջ շնորհիվ մեր վաղամահ գրականագետ ու էսթետ Արշավիր Մելիքյանի թարգմանության: Տարիներ առաջ, ուսանողությանս օրերին նրա խմբագրություն «Թիֆլիսում լույս տեսնող «Արվեստ, գրականություն ու գիտություն» շաբաթաթերթի մեջ առաջին անգամ կարդացել եմ Մարքսի բնութագրի այդ թարգմանությունը, բայց նրա բովանդակության վիթխարի նշանակությունն ու ամբողջ խորությունը կգացի «Էգեյան աշխարհում» ճանապարհորդելուց և Զմուռնիա (Իզմիր), Պերգամա (Բերգամա) ու Եփեսոս (Սելջուկ) այցելելուց հետո միայն:

Երբ գիտա-հետազոտական աշխատանքներիս ժամանակ փնտրում էի հին հայկական ու վրացական գմբեթածածկ բնակելի տների հեռավոր պուզահեռները, շատ անգամ եմ դիմել Հոմերոսի պոեմներին: Չէ՛ որ Ոդիսևսի տունը նույնպես գմբեթածածկ էր, ըստ երևույթին մեհարոնածև: Որքան քաղձալի էին այս վայրերն ինձ համար երիտասարդությանս տարիներին, ապա և նույնքան հուպիչ այս բուպեներն այժմ Էգեյան աշխարհի ընդերքում:

Բավական է հիշել, որ պերգամենտի (մագաղաթի) գյուտը տեղի է ունեցել Ատալիդների մայրաքաղաք Պերգամայում, այն մագաղաթի, որի շնորհիվ մեզ հասան հին աշխարհի մտքի ու սրտի հախուռն ստեղծագործությունները, այդ թվում նաև մեր հին հայկական բառն ու բանը:

Բավական է հիշել, որ այստեղ Եփեսոսում է ծնվել ու մեր թվագրությունից առաջ 6-րդ դարի վերջերից մինչև 5-րդ դարի սկիզբը

գործել դիալեկտիկայի հիմնադիր Հերակլիտ Եփեսոսցին, ինչպես կոչել է նրան Վ. Ի. Լենինը:

Այո՛, «ամեն ինչ հոսում է, ոչինչ չի մնում իր տեղում», «ամեն ինչ տեղի է ունենում պայքարի միջոցով», «թաքնված ներդաշնակությունն ուժեղ է բացահայտից»... Հերակլիտյան հանճարեղ պարզությամբ ասված այս պատառիկները մեզ են հասել հասարակական մտքի ու փիլիսոփայության պատմության ընդերքից: Այստեղից՝ Էգեյան աշխարհից է բխում մեր իմաստության աղբյուրը...

Հին Ջմուռնիան նկատելի դեր է կատարել նաև հայ մշակույթը պարզացման գործում: Մի հարյուրամյակ առաջ՝ 1861 թվականի դեկտեմբերի կեսերին, Միքայել Նալբանդյանն այստեղից նավով մեկնել է Պոլիս ու դեկտեմբերի 17-ի թվարկությամբ Բերայում (Պոլիս) գրել է իր հայտնի նամակներից մեկը. «Ազգային թատրոն Պոլսո մեջ» վերտառությամբ:

«...Պակաս ուրախություն չզգացինք մենք տեսնելով Ջմուռնիո մեջ Վասպուրական անձնուրաց ընկերության հայխոս թատրոնը: Այստեղ հաջող ենք համարում և դեպի նոցա ուղղել մեր առ ի սրտե շնորհակալությունը, և ընթացք ու հաջողություն մաղթել յուրյանց չնաշխարհիկ ասպարեզի համար:

Կեցցեն բոլոր հայ թատրոնը,
Կեցցեն և դերասանը,
Կեցցեն դերասանուհիք,
Պարկեշտ և ժրաջանք»:

Մեր մեծ լուսավորիչը նկատի է ունեցել, անշուշտ, Ջմուռնիայում թատերական ընկերության գոյության փաստը, որի մասին գրել է նաև ժամանակակից պարբերական մամուլը:

Այժմ, իհարկե, ավելորդ է փնտրել մշակութային այդ օջախներից որևէ մեկի հետքերն անգամ: 1915 թվականին Ջմուռնիայում ու նրա շուրջն ապրող մոտ 30 հազար հայության դիմաց այժմ այստեղ գուցե մի քանի ընտանիք լինի մնացած:

Լույսի առաջին ճառագայթների հետ մենք ոտքի վրա էինք: Օթելի պատուհանից մի գեղեցիկ պատկեր էր բացվել դեպի Էգեյան ծովը՝ Իվմիրի ծովածոցը: Կանաչ բլուրների շղթան կորչում էր կապույտ ջրերի մեջ, հորիզոնում: Կանաչ քաղաքը բարձրանում էր ամֆիթատ-

րոնի ձևով սարն ի վեր: Վիթխարի արմավենիներով վարդարված առափնյա պողոտան կիսաշրջան էր գծում ծովածոցի կորագծին զուգահեռ: Իվմիրի առափնյա փողոցը սահմանապատված է ջրից մի շատ ցածր պարապետով, մայրը բետոնից է, երկգույն, ալիքածև նկարներով վարդարված, որի շնորհիվ մի տեսակ անցում է ստեղծվում ջրի ալիքներից, քարե «ալիքների» միջոցով՝ դեպի ցամաք:

Կանաչ, հավերժ կանաչ մարգագետիններ ու այգիներ, մուգ կանաչ արմավենիներ ու նոճիներ, կապույտ ու փրփրադեղ կոհակներ, մուգ կապույտ կամ ամպամած երկինք՝ ահա Իվմիրի «ձմեռային» գույների ելևէջը:

Հելլենական Ջմուռնիան գտնվում է այժմյան միջնաբերդի շուրջը: Այդ միջնաբերդը ոչ միայն քաղաքի հնագույն անցյալի նշխարներից է, այլև նորագույն պատմության նշանակը: Իվմիրի քաղաքային այգում են գտնվում միջազգային տարեկան տոնավաճառի տաղավարները, այդ թվում Խորհրդային Միության տաղավարը: Զաղաքային այգում է գտնվում նաև Իվմիրի հնագիտական թանգարանը:

Դեպի Պերգամա տանող ճանապարհն ընկնում է Էգեյան ծովի ափով դեպի հյուսիս: Այստեղ աջակողմում, մշուշի մեջ, գծագրվում է հունական Լեսբոս կղզին, ձախակողմում տարածվում են կանաչավարդ հարթություններն ու բլրալանջերը: Օրը տաք էր, կարծես վաղ գարուն լիներ և ոչ թե դեկտեմբերի վերջը:

Ժամանակակից Պերգաման միջին մեծության մի գավառաքաղաք է, հիմնականում մեկ-երկու հարկանի կառուցապատումով: Հին քաղաքատեղի բլուրից գեղեցիկ պատկեր է բացվում դեպի Պերգաման, որը սպիտակ, դեղին ու կապույտ գույնի պատերով ու կարմիր կղմինդրածածկ կտուրներով բնակատներ ունի և գմբեթածածկ ու մինարեշար մզկիթներ:

Բայց Պերգամայի հմայքն, իհարկե, հին քաղաքատեղին է ստեղծել, ուր գերմանացի հնագետների ջանքերով համաշխարհային նշանակության առաջնակարգ հուշարձաններ են պեղվել, որոնցից լավագույններն այժմ վարդարում են գերմանական թանգարանները:

Պերգամայի առաջնակարգ հուշարձանների թվին է պատկանում Ջևաի Կոհասեղան տաճարն աստվածների ու տիտանների կռիվը կերպարող իր բարձրաքանդակներով, որոնց ընդհանուր երկարությունը հասնում է հարյուր քսան մետրի: Այդ աշխարհահռչակ հուշարձանի

միայն հիմքն է պահպանվել այստեղ: Կառուցվածքն ու քանդակները հեռիների թանգարանումն են գտնվում:

Պերգամայում երեք հին քաղաքատեղ կա՝ բյուզանդական, հռոմեական ու հելլենական: Անշուշտ, այստեղ, ավելի վաղ շրջանի չպեղված կուլտուրական շերտեր կան քարի ու բրոնզի դարերի, արխայի ու դասական Հունաստանի... Այն, ինչ որ հայտնաբերված է, շատ մոտավոր պատկեր է տալիս ավտոխտոն (տեղական) բնակչության կյանքի ու կենցաղի մասին՝ սկսած 10-րդ դարից մինչև մեր թվագրությունը:

Հայտնի է, որ 283 թվականին, մինչև մեր թվագրությունը, Ֆիլետայրոսը վերակառուցեց ու ամրապնդեց Պերգամայի միջնաբերդը: Կարծում են, որ Ալեքսանդր Մակեդոնացին այստեղ էր թաքցնում իր գանձերը...

Մեր թվագրության հենց սկզբին Պերգաման արդեն 160 հազար բնակիչ ուներ ու Եփեսոսի ու Սմիռնայի (Ջմուռնիա) հետ միասին Հռոմի ասիական գավառի ամենամեծ քաղաքներից մեկն էր համարվում:

Պերգաման բազմահարթակ քաղաք է, կանաչապատ բլրալանջին տարածված, այդ հարթակները ստեղծված են, իր ժամանակի համար բարդ, ինժեներական կառուցվածքների՝ հուժկու հենապատերի միջոցով: Զաղաքի արտաքին պատերը՝ Հվմեն 2-րդի կողմից շինված, որոնք մոտ 11 մետր բարձրությամբ պահպանվել են մինչև մեր օրերը, առանձնահատուկ կառուցվածք ունեն: Նրանք երեք շերտից են բաղկացած: Ներքին ու արտաքին շերտերը սրբատաշ քարի չոր շարվածքով են կառուցված, միջուկը լցված է խիճով: Պատերին առանձին ամրություն տալու համար, պատաշարի ամեն մի երկայնակ քարը հերթակալնում է լայնակ քարին:

Շինարվեստի այս տրադիցիային է հետևում անշուշտ վաղ հայկական հուշարձանների, օրինակ՝ երեբույքի շաղախակառույց պատի շարվածքը:

Հելենյան ու հռոմեական ժամանակներից սկսած այստեղ պահպանվել են տաճարների, պալատների ու քաղաքամիջի բազմաթիվ, մասամբ կանգուն կամ փլատակ հասարակական շենքերի բեկորները, որոնք իրենց համաչափ ու հղկված ձևերով այժմ էլ հափշտակում են դիտողին:

Բազմաձև ու բազմաբովանդակ ավերակների այդ վանգվածում առանձնապես նշելի են Պերգամայի երկու հարյուր հազար մագաղաթա-

փաթաթ պարունակող աշխարհահռչակ գրադարանի մոնումենտալ շենքի գեղատեսիլ մասնակներն ակրոպոլիսում: Գրադարանից հյուսիսարևմուտք է գտնվում հելլենական շրջանի ամենամեծ թատրոնը 15 հազար հանդիսատեսի համար: Սա Պերգամայի միակ թատրոնը չի, հռոմեական շրջանի կառուցվածքների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նաև հիսուն հազար տեղ ունեցող մեծ ամֆիթատրոնն ու երեսուն հազարանոց բացօդյա թատրոնը:

Կասկածից դուրս է, որ Տիգրանակերտի թատրոնը, որի մասին պատմական տեղեկություններ կան մեզ հասած, հելլենական օրինակի էր, (ինչպես գրում է նաև Գևորգ Գոյանն իր գրքում՝ «Հայ թատրոնի երկու հազար տարին») և ըստ երևույթին կառուցված սարալանջի վրա, բնական թեքությունն օգտագործելու նպատակով:

Ասկլեպիոնն ու Գիմնապիոնը Պերգամոնի նշանավոր կառույցներն են, որոնց վրա արժե մի փոքր կանգ առնել: Գիմնապիոնը դա երիտասարդության սպորտային ու կուլտուր-կրթական դաստիարակության կենտրոնն էր, որի շենքերի կոմպլեքսի մեջ էր գտնում նաև փոքր թատրոնը՝ Օդեոնը, հազար մարդու համար: Գիմնապիոնն ուներ հատուկ ցուցահանդեսային դահլիճ, գեղարվեստական ճեմասրահ, հատուկ հրապարակ սկավառակ նետելու համար և տաք ջրի բաղանիք:

Պերգամայի հուշարձանների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ասկլեպիոնը՝ հին աշխարհի ամենաառաջին բուժարան-հիվանդանոցը, որի մուտքի ճակատին գրված էր. «Աստու՛ւ անունով մահին արգելված է մուտքը», և որը գոյություն է ունեցել ու գործել յոթ հարյուր տարի շարունակ:

Ասկլեպիոնի համբավը հայտնի էր ժամանակակից բոլոր ժողովուրդներին: Բերնե-բերան տարածված էր, որ այստեղ մունջը լեզու է առնում, կույրը տեսողություն ստանում, թոքախտ ունեցողը՝ առողջանում: Այստեղ են բուժվել իմպերատոր Մարկ Ավրելիոսն ու Կարա-Կալան, որի մարմարե անդրին պեղվել է այստեղ ու ցուցադրված է Պերգամայի հնագիտական թանգարանում:

Բացի դեղորայքից, որոնք բույսերից էին պատրաստվում, Ասկլեպիոնում բուժում էին նաև արևի ու հանքային ջրի ավազանով, քնով, թատերական ներկայացումներով ու վանապան զվարճություններով:

Էգեյան աշխարհի ծնունդն են նաև Պիֆագորը՝ անտիկ էսթետի-

կայի հիմնադիրն ու Հալենը՝ հնագույն բժշկականության ամենացայտուն ներկայացուցիչը, որն իր աշակերտների հետ միասին գործել է այստեղ Ասկլեպիոնում:

Պիֆագորականները էսթետիկայի հիմունքները մշակելիս անդրադարձել են նաև արվեստի միջոցներով մարդկանց բուժելու մեթոդներին:

Յամբլիխը (4-րդ դար մ. թ.) «Պիֆագորիական կյանքի մասին» իր երկում գրում է. «Գոյություն ունեն այս կամ այն ներդաշնակություններ, ստեղծված կրքոտ հոգու դեմ, հուսահատության ու ներքին խոցերի դեմ... Մյուսները (ներդաշնակությունները—Ռ. Ա.) իրենց հերթին ջղայնության դեմ էին, վայրույթի դեմ, հոգեկան ամեն տեսակի փոփոխության դեմ... Նա (բժիշկը Ռ. Ա.) օգտվում էր նաև պարերով: Օգտվում էր նաև Հոմերոսի և Հեսիոդի բանաստեղծություններով, որոնք արտասանվում էին հոգին շտկելու համար...»:

Այսպիսով հնագույն ժամանակներից Ասկլեպիոնում օգտվում էին ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական տերապիայի բուժիչ միջոցներով, որոնց հիմքը դրվել է անտիկ աշխարհում և որոնք լայնորեն օգտագործվում են և մեր օրերում ու ամենուրեք:

Պերգամայի շինությունների ճարտարապետական տեսքը կուտ հելլենյան է, այստեղ հիմնականում օգտագործված է իոնիական օրդերը խոյապարզ սյունազուլաներով:

Պերգամայի ուշ հռոմեական հուշարձանների մեջ նշանավոր է Կարմիր բազիլիկան (2-րդ—3-րդ դար մ. թ.), որն այս կարգի կառույցների մեջ ամենալավ պահպանվածն է համարվում: Ենթը կարմիր աղյուսից է, ժամանակին երեսապատված սպիտակ մարմարով: Այստեղ առաջին անգամ մենք կգացինք հին Հռոմի հպորությունը, մեր առջև կարծես Պիրանեսիի հյութալի գրավուրներից մեկն էր կենդանացել իր ժամանակի հատուկ ոճով ու հմայքով կատարված: Ըստ ավանդության այստեղ է սպանվել Հիսուս Բրիտոսը, այստեղից է տարածվել բազիլիկյան շենքն իբրև վաղ քրիստոնեական տաճարների ճարտարապետական ձև և հասել նաև մինչև Հայաստան՝ (Երեբայք, Տեկոթ) ու Վրաստան (Բոլնիսի, Ուրբնիսի) և այլն:

Այն, ինչ պահպանվել է Եփեսոսում, նշանակալիորեն ստվերարկում է Պերգամայից ստացած թարմ տպավորությունը: Եփեսոսն, իհարկե, շմեցնում, շվարեցնում է դիտողին ոչ միայն իր կառույցների քա-

նակով ու թափով, այլև տեղանքի հետ շողկապված ու վանալան ժամանակաշրջաններում կառուցված կոմպլեքսի վարմանալի ամբողջականությամբ, արտահայտչականությամբ, և, եթե կարելի է ասել, հնչեղությամբ, այո, հնչեղությամբ...

Եփեսոսը գտնվում է Իվմիրից դեպի հարավ, այժմյան Սելջուկ կոչվող գյուղաքաղաքին կից: Հնուց նավահանգիստ հանդիսացող այս քաղաքն այժմ կտրված է ծովից, ծովը հետպահեցնելով տեղատվել է՝ թողնելով տիղմ ու ճահիճներ, որոնք դարերի ընթացքում տենդի պատճառ են հանդիսացել:

Ավանդությունն ասում է, որ Եփեսոսն ստեղծվել է անատոլիական աստվածությանց մոր տաճարին կից: 11-րդ դարում, մեր թվագրությունից առաջ, այստեղ հաստատվել են իոնացիները, որոնց Արտեմիդան համապատասխանում էր տեղական հին աստվածության իմաստին:

Ահա այդ ժամանակից է սկսվում Եփեսոսի բուն պատմությունը: Հռոմի տիրապետության տակ նա ասիական գաղութի ամենահարուստ քաղաքն է դառնում և ամենաառաջին նավահանգիստը:

Եփեսոսը կապված է նաև վաղ քրիստոնեության շրջանի հետ, առասպելն ասում է, որ սուրբ Հովհաննես ավետարանիչն այստեղ է գրել իր ավետարանը, նրա հետ միասին իր վերջին օրերն Եփեսոսում է անցկացրել Մարիամ Աստվածածինը Հիսուսի մահից հետո:

14-րդ դարում այստեղ հաստատվել են սելջուկները: Այդ իսկ ժամանակ կառուցվել է Իսա Բեյ Այդին-օղլու մկրիթը, որն այսօր էլ կանգուն է ու առանձնահատուկ տեղ է գրավում թուրք-սելջուկյան արվեստի պատմության մեջ:

Եփեսոսն իր ծաղկման տարիներին քաղաքակրթված աշխարհի ամենափառավոր կենտրոններից մեկն էր համարվում: Այստեղ էին խաչածնվում Արևմուտքի ու Արևելքի ուղիները, ըստ որում, ինչպես ընդգծվում է պատմության մեջ, այդ կենտրոնը գործում էր ոչ միայն խաղաղության օրերին, այլև պատերազմի ահավոր ժամին:

Եփեսոսում էր գտնվում Դիանա-Արտեմիդայի տաճարը, որի պաշտամունքը միջինասիական Սիրելա կամ Բիբելա աստվածությանն էր համապատասխանում: Դա առատության, պողաբերության պատանի կուլտի աստվածությունն էր: Այդ աստվածության Արտեմիդա-Դիանայի քանդակը վերջերս գտնվել է այստեղ՝ Եփեսոսում, մի խոռոչի մեջ:

պահված: Ըստ երևույթին կռապաշտները թաքցրել են արձանը վաղ քրիստոնեական ֆանատիկոսներից փրկելու համար:

Ռա հռոմեական շրջանի մի սքանչելի մարմարե արձան է (1-ին, 2-րդ դար), որը ոսկեպոծ է եղել: Մարմարը մարդու մաշկի գույն ունի, մշակված ու հղկված հմուտ ու երևակայությամբ հարուստ մեծ արվեստագետի ձեռքով: Արտեմիդան ներկայացված է բազմաստիք, բազմաշնորհ, իր ամբողջ էությունը առատություն մատուցող, կյանք ու թարմություն ներշնչող երիտասարդ կույսի կերպարով: Նա կարծես շնչում է, աչքերը կանչում են ձեզ, ձեռքերը դեպի ձեզ են ուղղված:

Այս արձանի ներշնչողական, էմոցիոնալ ուժը շատ մեծ է: Նա այժմ էլ ներգործում ու մեխվում է դիտողի հիշողության մեջ՝ հանդիսանալով Իզմիրի հնագիտական թանգարանի հիմնական ցուցանմուշը:

Եփեսոսի ճարտարապետության հատկանշական կողմը դա հուշարձանների վիթխարի մասշտաբն է. օրինակ, Արտեմիդայի արքայիկ տաճարը, որի միայն տեղն է մեզ հայտնի և որի բեկորներն են միայն մեզ հասել, 109 մետր երկարություն է ունեցել և 55 մետր լայնություն: Նա զարդարված է եղել իոնական օրդերի 108 հաղթանդամ սյունով. սյունամիջի ծածկը կալվող մարմարե քարերից մի քանիսը վեց մետրից ավելի երկարություն են ունեցել:

Տաճարի շինարարները Խերսիֆրոնն ու Մետագենը դեռևս 6-րդ դարում մեր թվագրությունից առաջ սյուների թմբկաքարերն ու արխիտրավի սալերը տեղափոխելու համար ճարտարապետության պատմության նախահայր Վիտրուվիոսի վկայությամբ հատուկ սարք են հնարել, որը շատ նման է եղել ժամանակակից ճանապարհաշինարարության մեջ տարածված գլանվակներին:

Գիտնականները հաշվել են, որ տեղափոխվող առանձին քարերի քաշը հասել է 16—18 հազար կիլոգրամի: Նույնպիսի վիթխարի բեկորներ ունի Մերապիսի երկրաշարժից խորտակված տաճարը:

Եփեսոսի իսկապես տիտանական մասշտաբը զգալու համար պետք է գոնե մի անգամ զբոսնել նրա փողոցներով, որոնք կլիմետրերի երկարություն ունեն, հարմարորեն շաղկապված են բլրաշատ տեղանքի հետ ու պատած են մարմարե մեծ սալերով:

Փողոցներին կից են գիմնասիոնները, օդոնը, բուլետերիոնը, բաղանիքները, տաճարները, գրադարանը, վերջապես քաղաքի հրա-

պարակը՝ խանութներով, ու նորից շենքեր, շենքեր, շենքեր, արձաններ ու արձաններ, բոլորը սրբատաշ սպիտակ մարմարից, որը Մարմարա ծովի Պրոկոնեզ կոչվող կղզումն է հայթայթվում:

Ահա և Արկադիոս կայսրի դեպի նավահանգիստ տանող պողոտան՝ ամբողջովին մարմարապատ, երկու կողմից ելրված սյունաշարով: Սյուների զլխին ժամանակին ջահեր էին վառվում՝ քաղաքի առաջին լուսավորությունը:

Այս «հաղթանդամ» կառույցների կողքին Ադրիանի փոքրիկ, բայց մոնումենտալ տաճարը «չի կորչում», նա «հնչում է» իբրև պաթետիկ սիմֆոնիայի մեջ ականջ շոյող մի մեղմ ակորդ...

Իզմիր, Պերգաման և Եփեսոս: Բայց քանի՞քանի առաջնակարգ քաղաք ու բնակատեղի է ունեցել Էգեյան աշխարհը հազարամյակների ընթացքում, կից են Միլեթը, Մագնեսիան, Տրոյան: Կարիք կա արդյո՞ք, թվարկելու: Հնարավոր է արդյո՞ք ընդրկել անընդգրկելին: Իզմիրը, Պերգաման ու Եփեսոսը լիովին պատկերեցին մեզ Էգեյան աշխարհը, ցուցաբերեցին նրա անմար հմայքն ու անկրկնելի գեղեցկությունը...

ԵՐԵՎԱՆ ԷՍԿԻՉԾՆԻՐՈՒՄ

Իզմիրից մենք դեպի Անկարա պետք է մեկնեինք Էսկիշեհիրիով, առանց Բուրսա վերադառնալու: Բայց առավոտը մեզ հայտարարեցին, որ Բուրսա մտնելն անհրաժեշտ է, քանի որ հորդ անձրևներից ճանապարհները վտանգված են: Ինչ արած: Եվ, իսկապես, անձրևների հետևանքով գետերը տեղահան էին եղել, հեղեղել դաշտերը և քայքայել դաշտավայրերով անցնող ճանապարհները: Գյուղական շատ տներ կղզու պես մնացել էին ջրերի մեջ, այգի ու բանջարանոց՝ հեղեղատների տակ: Այդ հեղեղները Արևմտյան Անատոլիայի համար «սովորական են» համարվում և գրեթե ոչ մի միջոց չի գործադրվում գետերը սանձելու կամ նրանց ջրերը ամբարելու ուղղությամբ:

Մեր ավտոն մի ամբողջ օր ճանապարհին էր, նրա դեկը գտնվում էր մի շատ հմուտ թուրք մեքենավարի՝ Խալիլի ձեռքին, որի ժրաջան

աշխատանքն ու ջերմ վերաբերմունքը դեպի մեզ արժանի է հիշատակման:

Արդեն մութ էր, երբ մենք Բուրսայի վրայով հասանք Էսկիշեհիր և ընթրելու համար կանգ առանք «Գամ-գամ օթելում», որը քաղաքի կենտրոնումն է գտնվում: Երբ ճաշարան մտանք, մեզ դիմավորեց հասակն առած, կիրթ շարժ ու ձևով մի անձնավորություն: Նա դիմեց մեզ մաքուր ռուսերենով՝ «Մեզ տեղեկացրին,—ասաց նա,—որ ռուսական պրոֆեսորներ են հյուրընկալելու մեզ, բայց ես տեսնում եմ միայն երիտասարդ մարդկանց, ու՞ր են նրանք»:

Պարզվեց, որ մեր պրուցակիցը 40-ից ավելի տարի է ինչ հեռացել է Ռուսաստանից. ավարտել է Պետերբուրգի համալսարանը և հիշում է բեղ ու մորուքավոր իր պրոֆեսորներին. «խորհրդային մարդիկ հազվագյուտ են այստեղ» ընդգծեց նա:

Այո՛, 40-ից ավելի տարի կտրված մայր հողից, խորտակված նավի բեկորի նման նա վեր ու վար է անում այս հեռավոր ջրաօդորտում: Երբ նա խոսում էր մեզ հետ, զգացվում էր նրա կսկիծը, խոր, շատ խոր կսկիծը. «Դա՛, այսպես դասավորվեց մեր բախտը...», կրկնում էր նա ու թախծոտ աչքերով դիմում մեզ՝ հասկանալու, զգալու համար հեռավոր իր հայրենիքի նոր ընթացքը: Բայց նա խոսում էր հատ ու կտոր, խոսում էր ու ետ նայում... Հետաքրքրություն ու վախ, վախ ու հետաքրքրություն...

Նվագախումբը մեր պատվին ռուսական հին մեղեդիներ էր նվագում (մեր նոր երգերն, ըստ երևույթին, դեռ չեն հասել Էսկիշեհիր) ու ես ակամայից հիշեցի Ալեքսանդր Վերտինսկուն, վերհիշեցի նրա մեծ վարպետությամբ գրած մեմուարները՝ դեպի Թուրքիա էմիգրացած ռուս սպայության ու նրանց բախտի վերաբերյալ, այդ մեմուարները վերջերս տպվեցին «Մոսկվա» ամսագրի էջերում...

Արդեն ուշ գիշեր էր, երբ հասանք Անկարա...

Պ.Ն.ԿՈՒՎԱՅԻՑ—Պ.Ն.ԿԱՐՍ.

Ըստ երևույթին, աշխարհիս այս հնագույն քաղաքներից մեկի անունը սկիզբ է առնում խեթական Անկուվայից կամ Անկյուրայից, որը ժողովրդի մեջ պահպանվել է Էնգյուրա-Անգորա ձևով: Բա-

ղաքի հիմնադրումը կապված է փրուգիական Միդաս թագավորի անվան հետ (7-րդ դար մ. թ. առաջ), հռոմեական տիրակալության ժամանակ այստեղ էր գտնվում Ղալաթիայի մայրաքաղաքը՝ Անցիրան: Պատմությունից հայտնի է, որ 1402 թվականին Թեմուրն այստեղ ջախջախեց թուրքական փոքրին: 1919 թվականին քաղաքը թուրք ազգային-ազատագրական շարժման կենտրոնն է դառնում, ուր և ուղիղ 40 տարի սրանից առաջ Մուստաֆա Բեմալը Ստամբուլից տեղափոխում է նորաստեղծ հանրապետության մայրաքաղաքը, կոչելով նրան Անկարա:

Անկարան գտնվում է Կենտրոնական Անատոլիայի լեռնադաշտում, ծովի մակերեսից մոտ հազար մետր բարձրության վրա: Միջնաբերդը, որը քաղաքի կառուցապատման մեջ իշխող տեղ է գրավում, հիմնել են դեռևս հեթոթները (խեթերը): Նոր պեղումներն այստեղ հայտնաբերել են մինչև մեր թվագրության 14-րդ դարին վերաբերող փրուգիական շերտ, մեզ են հասել նաև հռոմեական, բյուզանդական և ուշ միջնադարյան հուշարձաններ:

Միջնաբերդումն է գտնվում տեղական կարմիր բազալտից կառուցված Ազվուստոս կայսրի տաճարը՝ զարդարված հռոմեական կոմպոզիտ օրդերի խոյակներով, որը միակն է աշխարհում և որի պատի վրա պահպանվել է Ավգուստոսի բանավեճը պարունակող բիլինգվան (լատիներեն և հունարեն երկլեզվյան տեքստը) սենատի հետ՝ մի հազվագյուտ արձանագրություն:

Միջնաբերդին կից է հռոմեական մեծ բաղանիքը հանրաձանոթ թերմերի ձևով, որի շինվածքի մեջ է մտնում նաև լողանալու բացօդյա առաջին ավազանը: Մեծ տարածության վրա պահպանվել են ջերմացրած օդանցքների կառուցվածքները հիպոկատուսների ձևով, որոնք ծածկված են եղել հատակի սալերով: Բաղանիքի հատակը տաք լինելու պատճառով հաճախորդները մուտքի մոտ ստացել են փայտյա նալիկներ: Ահա թե որտեղից են դրանք գալիս: Բաղանիքը մատակարարվել է սառը, զով և տաք ջրով, հատուկ ջրմուղների և ներքին խողովականցքերի միջոցով:

Բաղանիքի արտաքին բակում ցարուցրիվ բազմաթիվ քարեկան թափված բաց երկնքի տակ: Երբ մոտեցա, պարզվեց, որ դրանք հայկական արձանագրություններով ստելաներ են, որոնց վրա անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել: Իմ լուսանկարած քարերը ինվենտարացված են 8937, 8939 և 8940 համարներով:

Համար 8937 քարը բարդ հորինվածք ունի. նա չորս մասի է բաժանված, ներքևում բանդակված է զույգ եղնալուծ, մաճը թափուր մի արոր, արորի կողքին շուն է պատկերված:

Երկրորդ կարգում քանդակված են մայր ու որդի, վերջինս իր փոքրիկ շնիկի հետ: Պատկերադաշտը լրացված է կնոջ կենցաղային իրերով, ըստ երևույթին քանդակված են կոթով հայելի, կավե աման (°) ու պտուղներ (°), թե ծիսական գավաթ ու կենաց ծառ: Երրորդ կարգում տեղավորված է արձանագրությունը: Կոթողը պսակված է տղամարդու և կնոջ բարձրաքանդակներով, որոնք ստատիկ ճակատային կեցվածք ունեն, ձեռքերը հագուստի տակից դուրս հանված ու դրված կրծքի վրա: Այդ կիսանդրիներն իրենց ոճով, հագուստի մշակման կերպով հին հռոմեական քանդակածներ են հիշեցնում: Ստելան երկու կողմից պարփակված է խաղողի ոստի վարդանկարով, որի հնագույն օրինակները պահպանված են խեթական արվեստում և ուղղակի հիշեցնում են Գառնիի Տրդատյան տաճարի (մեր թվ. առաջին դար) խաղողապարզ ռելիեֆները: Այդ մոտիվն ավելի վարգացած վիճակում մեզ է հասել բազմաթիվ անգամ և առանձնապես Վանա կղզու վրա կառուցված հռչակավոր Ախթամարա վանքի (921 թ.) ճակատների վաղերում:

Համար 8939 քարի հորինվածքն ավելի պարզ է. կենտրոնում, ըստ երևույթին, մի կին է պատկերված իր երկու զավակներով՝ ավագը նույնպես շան հետ: Ռելիեֆները հարթաքանդակի ձև ունեն և տեղավորված են կամարակապ որմնախորշի մեջ, որի եզրաթիակները նախորդ հուշարձանի նման վարդարված են խաղողի ոստի նմանով: Եզրաթիակների անցումը դեպի ճակատ, լուծված է կորինթական (°) կամ վաղ բյուզանդական խոյակով: Արձանագրությունը հուշարձանի ներքին մասի վրա է տեղավորված:

Շան քանդակներն այս շիրմաքարերի վրա պատահական երևույթ չի կարող լինել, «Հարալեզ շան» կուլտը հեթանոսական ժամանակներից պահպանվել է Փոքր Ասիայի ժողովուրդների՝ այդ թվում հայերի մեջ, ինչպես վկայում են նաև 5-րդ դարի մեր պատմիչները:

Համար 8940 քարը լակոնիկ կերպով է լուծված: Նա երկփեղկ դռան ձևն ունի, որը ծածկված վիճակում ամբողջական դռան տպավորություն է թողնում: Այդ ձևի դռների վերլուծությունը, ըստ պատմիչ

Թումա Արծրունու վկայության, տրված է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու 1950 թ. հոկտեմբերին՝ Երևանում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նիստին կարդացած զեկուցման մեջ, որի թեման էր՝ «Տասներորդ դարի պալատական շենքերը»: Դռան ձախակողմի փեղկի վրա, ըստ երևույթին, պատկերված է ծիսական կենաց հեղուկ պատրաստելու հավանգը՝ խուփին մի թռչուն տոտեմի ձևով, իսկ աջակողմի փեղկին հավանգի դաստան ու շերեփը (°):

Արձանագրության շերտից բարձր կամարի տակ քանդակված են երկու առյուծ իրար դիմաց, իրենց կեցվածքով շատ նման Կիրովականի թասի զույգ առյուծներին: Այս հուշարձանի վարդաքանդակներն ավելի պրիմիտիվ են և զուցե եզրատականից ու հունականից են ընդօրինակվել:

Անկարայում եղած այս հուշարձանները, անկասկածորեն հնագույն կոթողներ են, օգտագործված մի քանի անգամ: Նրանց վրայի այժմյան 19-րդ դարավերջի արձանագրությունները փորագրված են հին: արձանագրությունների վրա, որոնց հետքերը պարզ նշմարվում են: Այդ շիրմաքարերի ճշգրիտ թվագրումը հնարավոր կլինի մանրամասն ուսումնասիրությունից հետո միայն: Բայց մի հանգամանք պարզ է, որ նրանք իրենց ոճով և վարդարվեստի մոտիվներով ընդհուպ մոտենում են հռոմա-հելլենիստական շրջանին, գուցե և կատարված տեղացի, այդ թվում հայ վարպետների կողմից:

Անկարայի միջնաբերդի շրջանում մենք հնարավորություն ունեցանք ի մոտո ծանոթանալու թուրքական ժողովրդական բնակելի, հիմնականում երկհարկանի տների հետ, որոնց օրինակները կարծես անփոփոխ մնացել են գեղանկարչության ակադեմիկոս Եվգենի Լանսերեի 1922 թվականին Անկարա այցելության օրից: Ահա նրա 1925 թվականին Լենինգրադում հրատարակված «Ամառն Անգորայում» գրքուկը: Եթե համեմատենք այնտեղ զետեղված գրչանկարները ժամանակակից լուսանկարների հետ, շատ քիչ բան կնկատվի փոփոխված հին քաղաքում:

Այդ բնակելի տների հատակագծի հիմքում դրված է պոլիգամիան — բազմակնությունը, այստեղից և տան ներպարփակ հորինվածքը: Տների կառուցվածքը կմախքային է, կարկասային աղյուսով կամ տախտակով ու ծեփով պատած: Առանձնապես տիպիկ են սենյակների

կառկարամասերը՝ էրկերները, որոնք բազմաշերտ բարձակների միջոցով առաջանում են ու նեղ փողոցների մայթերին շվաք գցում:

Ավգուստոսի տաճարին կից հին մի մինարե տեսա, որի վերին հարթակի վրա ռադիոյի բարձրախոս էր դրված: Պարզվեց, որ իսլամը նույնպես օգտվում է տեխնիկայի նորույթներից. մուլան ալլես նեղ սանդուղքներով վեր չի բարձրանում և կոկորդին գոռ չի տալիս:

Թուրքիայի մյուս քաղաքների նման Անկարան նույնպես լի է կոնտրաստներով: Հին թաղերին կից այժմ տարածված է նոր Անկարան. լայն ու ուղիղ պողոտաներով, որոնց մեջ գլխավորը Բենալ Աթաթուրքի բուլվարն է՝ կապիտալ շենքերով: Առանձնապես լավ տպավորություն է թողնում Ենի-մահալեն՝ նոր բնակաշինարարության շրջանը:

Մայրաքաղաքում բազմաթիվ պետական, վարչական և դեսպանական շենքեր կան՝ բազմահարկ ու բազմապիսի, այդ թվում Խորհրդային Միության դեսպանության նոր շենքը, որի հեղինակները ճարտարապետներ Բ. Բոզդանովն ու Ի. Ռոժինն օգտագործելով նորագույն շինանյութերն ու կառուցվածքները, աշխատել են նրա արտաքինին ու ծավալամիջին պարզ ու արտահայտչական ձև տալ:

Անկարայի միջուկը, նրա դոմինանտը, իհարկե, Մուստաֆա Բենալի դամբարանն է, կառուցված Ստամբուլի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Բուրհանեդին Օնաթի նախագծով: Դա մի ամբողջական ու սիմետրիկ անսամբլ է տեղավորված բնական բարձրության վրա և շաղկապված քաղաքի հատակագծի հետ: Հեռվից նա մի քիչ «չոր» սխեմատիկ տեսք ունի, բայց երբ մոտենում ենք նրան և հետքվհետե «հաղթահարում» նրա կոմպլեքսի խնամքով մտածված մասերը՝ բազմաստիճան սանդուղքը, պրոպիլեյը, թուրք ժողովրդի ու կորքի սիմվոլը հանդիսացող քանդակային եռանդրի խմբերը, կանոնավոր սալահատակված առյուծաշար ալեան, որի քարերի արանքում ծուրմ է հավերժական կանաչը և վերջապես լայն հրապարակը՝ ապա նրա աջակողմյան ելքին բարձրացող դամբարանի շենքը հմոցիոնալ ներգործության մի նոր ուժ է ձեռք բերում: Այդ «ուժը» նախապատուհաստվում է հետպիտե թե անսամբլի առանձին էլեմենտների միջոցով և թե հեռվից երևացող մոնումենտի հղկված և համաչափ հորինվածքով:

Անսամբլի ամբողջականությանը, անկասկած, օգնում է նաև ոսկեգույն քարը՝ տեղական տրավերտինը:

Ով ճանապարհորդել է Կենտրոնական ու Արևմտյան Անատոլիայով, նա չի կարող տառապած չլինել «թանգարանային հիվանդությամբ»: Անհնար է լինել Ստամբուլում, Բուրսայում, Իզմիրում, Պերգամայում և, վերջապես, Անկարայում և ամբողջ օրեր չնվիրել այդ քաղաքների հնագիտական թանգարաններին, առանձնապես Ստամբուլի և Անկարայի թանգարաններին, որոնք ամենաճիշտ իմաստով, աշխարհահռչակ հավաքածուներ ունեն: Այստեղ ներկայացված կամ հաճախ ուղղակի կուտակված են մեծ քանակությամբ առաջնակարգ հուշարձաններ, որոնցից ամեն մեկը մի ամբողջ թանգարանի պարզ կարող է հանդիսանալ:

Հին Արևելքի, Էգեյան աշխարհի ու Բյուզանդիոնի հուշարձաններն այնքան շատ են Փոքր Ասիայի երկրամասում, որ նրանք չեն կարող տեղավորվել թանգարաններում և նրանցից շատ-շատերը, մինչև անգամ անտիկ շրջանի խճանկարները մնում են բացօդյա, ուղղակի արևի ու անձրևի տակ: Հաճախ էլ այդ կուտակված նյութերը ներկայացված են անսխտեմ և կամ ձևական սկզբունքով մշակված էկլեսպոլիցիայի ձևով, որը խանգարում է նյութերի սխտեմատիկ ըմբռնմանը: Այսպես, օրինակ, Ստամբուլի հնագիտական թանգարանում այլևայլ ժամանակաշրջանների արվեստի վանապան ճյուղերը ներկայացված են մի շատ վարմանակի սկզբունքով՝ ըստ օգտագործված նյութի՝ մարմարի, տերակոտի, բրոնզի, ոսկու, արծաթի և այլն:

Բայց չնայած այս բոլորին, ներկայացված հուշարձանները անսպառ աղբյուր են հանդիսացել արվեստագետ հետազոտողների մի քանի սերնդի համար: Շատ քիչ բան է ուսումնասիրված, և առավել քիչ հրատարակված: Այդ իսկ տեսակետից մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել մեր տեսած բազմաթիվ կամ անհամար հուշարձաններից մի քանիսի շուրջը, մասամբ էլ մեր մասնագետների ուշադրությունը գրավելու նպատակով:

Նախ Անկարայի հնագիտական թանգարանի մասին:

Անկարայի թանգարանը բացվել է 1951 թվականին, քաղաքի միջնաբերդին կից 14-րդ դարի, թուրքական հին շուկայի վերակառուցված շենքում: Թանգարանի մուտքի մոտ դիտողի առջև ծառանում են

խեթական երկու վիթխարի քանդակ՝ Մալաթիայի պալատի դուռը բացող թագավորի (8-րդ դար մինչև մեր թվագրությունը) և պատերազմի աստուծու արձանները հողավեցեից:

Ստամբուլի հնագիտական թանգարանում Նատուշաշի մի թևաշյուժ աստվածուքայան քանդակ կա. երբ նայում ես նրա պրոֆիլին, իսկական հայկական պրոֆիլ է:

Խեթական հուշարձանները հայտնաբերված են Անատոլիայի 85 վայրերում. պատմաբաններն ու հնագետները դեռևս ամբողջապես չեն գնահատել այդ վարմանայի և բազմահարուստ կուլտուրայի գանձերը, որոնք ինքնաբերական են, ինքնատիպ ու վայրի: Դեռևս չի գտնված նրանց ուրույն տեղը պատմության այդ մութ ոլորտներում: Մի հանգամանք միայն վերջնականապես հաստատված է, որ խեթերը Փոքր Ասիա են ներխուժել Բալկանյան թերակղզու և Բոսֆորի վրայով:

Հնարավոր է արդյոք այստեղ մեկ առ մեկ թվել պրոտաիթթական և խեթական կուլտուրայի հայտնաբերված ու թանգարանում ցուցադրված բոլոր էքսպոնատները, իհարկե, ոչ:

Առանձնապես նշանակալից են Ալաջայում պեղված պրոտաիթթական (նախահեթթական) շերտերը (2-րդ հազարամյակ մինչև մեր թվագրությունը), ուր հայտնաբերվել են Փոքր Ասիայի հնագույն ավտոխոտն ազգաբնակչությանը պատկանող մեծ քանակության բրոնզե ու ոսկե առարկաներ:

Խեթերը հնուց երկաթ ձուլողներ են եղել, նրանց պատրաստած երկաթե իրերը գտնվել են նաև Տատանհամոնի դամբարանում. Հաջիլաթում պեղվել է պտղաբերության Բիբելա աստվածուքայան՝ ամենավաղ արձանաձևը, որը մեկ տանում է և հասցնում մինչև նոր քարե դարը:

Թանգարանում ներկայացված են խեթական ճարտարապետական բազմաթիվ դետալներ, այդ թվում կույզ սֆինքսների ջլուտ քանդակներով պարզարված սյան խարիսխներ: Սյուները եղել են փայտից: Միայն մի գյուտ է հայտնի Սիրիայում խեթական քարե սյան ու քարե խոյակի, որը իոնական օրդերի նախատիպը կարող է հանդիսանալ:

Չենջերլիկի պեղումներից մեկ հասած մեկ մետր և 54 սանտիմետր տրամագծի խարիսխների գլանները բոլորված են «ութ թվանշանի» ձև ունեցող վարդանկարներով, որոնց միջուկներում ութթերթանի վարդակներ կան տեղավորված: Նման ձևի վարդանկարը, հայտնի է,

եր տեղ է գտել նաև հայ և վրաց ճարտարվեստում հնագույն ժամանակներից ի վեր:

Անհրաժեշտ է հիշել, որ խաչի էմբլեման՝ իբրև սիմետրիկ չորս էլեմենտների հնագույն շաղկապի օրինակ նույնպես հայտնի է եղել խեթերին և հետո միայն օգտագործվել է քրիստոնեության կողմից:

Ոչ պակաս երկար ճանապարհ է անցել երկգլխանի արծվի խեթական վինանշանը: Այդ վինանշանն օգտագործել են բյուզանդական կայսրերը, ապա նա հասել է Հայաստան՝ դառնալով Ամենայն Հայոց կաթողիկոսի դրոշմ ու անցել Ռուսաստան իբրև Ռոմանովյան դինաստիայի պետական խորհրդանշան:

Անկարայի ու Ստամբուլի թանգարանների այս ու նման կարգի բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ պրոտոիթթական կուլտուրան աշխարհի հնագույն կուլտուրաներից է, որը բխել է նեոլիթ-էնեոլիթյան ընդերքից: Այդ կուլտուրան ընթացել է ինքնուրույն կերպով, որի տրադիցիաներից առատորեն օգտվել են խեթերը՝ ստեղծելով իրենց ուրույն ու ինքնաբերական արվեստը, որն, անկասկած, մեծապես ներգործել է թե՛ հունա-հռոմեական, և թե՛ Մերձավոր Արևելքի ժողովրդների, այդ թվում մեր քաղաքակրթության վաղ շրջանի վարձագաման վրա: Գիտության կողմից այս վաղուց ընդունված թեպն սպասում է իր մարմնավորմանը և փաստավորմանը: Այդ ուղղությամբ դեռ շատ քիչ բան է արված:

Խորհրդային Միության և Թուրքիայի կուլտուրական կապերի վարձագաման պայմաններում, ըստ երևույթին, հնարավորություններ կստեղծվեն տեղում ուսումնասիրելու այդ առատ ու ցայտուն նյութերը:

Ստամբուլի հնագիտական թանգարանը, ուր, ինչպես նկատվեց վերևում, կան նաև շատ հարուստ նյութեր Հին Արևելքից, հիմնականում հելլենական կուլտուրական գանձերի մի անկրկնելի շտեմարան է, որտեղ կարելի է տեսնել արվեստի այլևայլ ճյուղերի եզակի հուշարձաններ:

Այս դեպքում ևս անմտություն կլինի թվել, բերենք մի երկու օրի նակ.

Այստեղ միայն կարելի է տեսնել մինչև մեր թվագրության 17—16 դ. դ. էոլիական և պրոտոիոնական տափակ խոյակներ, որոնք հայտնի են աշխարհում ստամբուլյան օրինակների անունով: Այստեղ են կուտակված Տրոյայի ոսկեղենը, Տանագրայի աշխարհառջակ տերակոտը

և, վերջապես, այստեղ են հելլենյան արվեստի ամենաառաջնակարգ հուշարձանները: Ալեքսանդր Մակեդոնացու (*), փիլիսոփաների և սգացող կանանց մարմարե սարկոֆագները (քարատապան), որոնք համարյա միհարկանի տան բարձրություն ունեն և նրբատաշ քանդակներով են շրջապատված: Այս հուշարձանները մի տեսակ պսակում, «հավերժացում են» դիտողի գիտելիքները հելլենական կուլտուրական աշխարհի վերաբերյալ, որի թափն ու ծավալը Պերգամայում ու Եփեսոսում միայն կարելի է կզգալ...

Արագորեն գլորվեցին օրերը, բազմաթիվ ու բազմապան տպավորություններով բեռնավորված մենք Անկարայից՝ Բոլուի, Ադապազարի ու Իսմիրի վրայով վերադարձանք Ստամբուլ, որի նավահանգստում հեռվից սպիտակին էր տալիս մեկ արդեն հարապատ դարձած «Ֆելիքս Չերժինսկի» ջերմանավը...

Ստամբուլ—Թրիլիսի
1963—1964 թթ.




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Առաջաբան — ԱՄՏ. ԿԱՐԻՆՅԱՆ	3
Բումելի Հիսարը	9
Պոուլտ մը Պոլտ թաղերու մեջ	11
Թուրքիայի առաջին մայրաքաղաքում	22
«Լույսը տեսնում ենք ցերեկով, ջուրն անձրևի ժամանակ»	26
Ահա և Էզեյան աշխարհը	29
Երեկոն Հսկիչեհիբում	37
Անկուվայից Անկարա	38
«Թանգարանային հիվանդություն»	43



Ռոմեյի Հրապ ամրոցը



Գոլմա-Քախչալի պալատը հասփորի եփրուպական ափին



Ավգուստ կայսրի տաճարի շրամուտը



Կապույտ մզկիթը



Կապույտ մզկիթի ներքին տեսքը



Սալգադարի եկեղեցին, XI դար, այժմ Կախրե ջամի

խախտված ջամի



Պտղաբերության հիթիթական աստծու ժայռակոփ բարձրաքանդակը
750 թ. մինչև մեր թվարկությունը



Արղանայի ընդհանուր տեսքը



Բուրանայի ընդհանուր տեսքը



Կանաչ սզկիրը Բուրսայում

Հսկա մի խոյակ Թոր-Գափուփ բաղուն





Մի տեսարան Ռոբ-Գափուի բակից, բյուզանդական դամբարան:



Ստամբուլի ընդհանուր տեսքը. Դալարթայի կամուրջը Ոսկեղջյուրի ծովածոցի վրա



Այա-Սոֆիա



Կոնստանդինի սյունը քաղաքի հնագույն թաղում



Բերա



Հելլենական պատշարի մի օրինակ Պերգամոնից



Երաժիշտների շքերթը, բալայտակոի բարձրաբանդակ Ջենջեկից.
Ստամբուլի թանգարան



Ասկեպիոնը Պերգամալում



Կարծիր բազիլիկան Պերզամայում



Արտեմիդա-Ֆիանայի բանդակը՝ գտնված Եփեսոսում



Մի տեսարան Եփեսոսից

Արկադիոս կայսրի մարմարաշէն պողոտան Եփեսոսում





Անկարալի կոնտրաստները, հին Անկարան



8939 ինվենտարային համարը կրող շիրմաքարը հայերեն արձանագրությամբ



Աղթամարի բարձրաքանդակներից

Անկարայի հեղենիստական բազնիքի արտաքին բազը





8937 ինվենտարային համարը կրող շիրմաքար հայերեն արձանագրությամբ



Հելլենական թատրոն Պերգամայում տասնինը հազար հանդիսատեսի համար



Գիմնասիոն նշխարները Պերգամալում



Սյան խարխսի Ջենջելից VIII դ. մինչև մեր թվ.
Սյան խարխսի Ջենջելից. Ստամբուլի թանգարան

Ստամբուլի թանգարան



Ռուբեն Հակոբի Աղաբաբյան

Ուղևորություն դեպի անցյալն ու ներկան

Խմբագիր՝ Ա. Ա. ՊԱՅԱԶԱՏ
Նկարիչ՝ Հ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Գեղ. խմբագիր՝ Ա.Ն. Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Վ. Մ. ԵԳԱՆՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

ՎՖ 09076 Պատվեր 684 Տիրած 2000

Հանձնված է արտադրության 24/IV—
1965 թ: Ստորագրված է տպագրության
27/VII—1965 թ.: Թուղթ՝ 60×84¹/₁₆:
Հրատ. 2,2 մամ.+17 ներդիր, տպ. 3,0
մամ.: Գինը՝ 35 կոպ.:

ՀՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պե-
տական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբե-
րության գլխավոր վարչության № 1 տպա-
րան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

